1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հայաստանի Հանրապետությունը խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության նպատակով իրականացնում է բաց մրցույթ՝ ընտրության և դրա վրա ազդեցություն ունեցող այլ գործընթացների մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, ինչպես նաև իրավաբանական անձի համար անկախ նրա՝ օտարերկրյա կազմակերպություն լինելու հանգամանքից օպերատորի ընտրության գործընթացին մասնակցելու հավասար հնարավորության ապահովման սկզբունքների պահպանմամբ:

1.2. Սույն փաստաթուղթը սահմանում է Ընտրության Ընթացակարգի Որակավորման Հարցման փուլին վերաբերող հանգամանքները: Առաջարկի հարցման փուլի մանրամասն պայմանները, ներառյալ՝ Հայտերի ձևաչափի և բովանդակության նկատմամբ կիրառելի պահանջները, Հայտերի ներկայացման և գնահատման ընթացակարգերը և մրցութային գործընթացին վերաբերելի այլ տեղեկությունները ներկայացվում են Առաջարկի Հարցմամբ, որը նախատեսված է այն Հայտատուների համար, որոնք անցել են որակավորման փուլը (Որակավորված հայտատուներ):

1.3. Որակավորման հայտարարությունը հրապարակվել է Լիազոր մարմնի և Վերահսկող մարմնի պաշտոնական կայքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքում՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ համաձայն Կիրառելի Օրենքի: Ընտրությանը մասնակցությամբ հետաքրքրված բոլոր անձինք հրավիրվում են ներկայացնել Որակավորման Հայտեր Կիրառելի օրենքի և սույն Որակավորման հարցման պահանջներին համապատասխան:

1.4. Որակավորման Հարցումը նախապատրաստվել է Կիրառելի Օրենքի համաձայն, ներառյալ՝ 12.06.2024 թվականին ընդունված «Խաղային գործունեության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-263-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 14.08.2025 թվականի «Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության մրցույթի անցկացման ընթացակարգը, Օպերատորի ընտրության ընթացակարգին կոնսորցիումով մասնակցության կարգը, Օպերատորի հետ պայմանագրի կնքման կարգը և մրցույթը չկայացած համարվելու հիմքերը սահմանելու մասին» թիվ 1149-Ն որոշումը (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

1.5. Օպերատորի ընտրության ընթացակարգի հայտարարության արդյունքներով հաղթող ճանաչված հայտատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել նոր կազմակերպություն, որի հետ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (Վերահսկող մարմին) մտադիր է 15 տարի ժամկետով պայմանագիր կնքել՝ օրենքով Օպերատորի վրա դրված գործառույթների իրագործումն ապահովելու նպատակով: Օպերատորի ֆինանսավորումն իրականացվելու է ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջոցների հաշվին:

1.6. Համաձայն «Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝

Օպերատորին վերապահվելու են հետևյալ գործառույթները՝

1.6.1. Վկայագրեր և սերտիֆիկացում. Տրամադրում, երկարաձգում և դադարեցնում է օպերացիոն վկայագրերը, սահմանում է դրանց ժամկետներն ու վճարները, ապահովում է խաղային արտադրանքների սերտիֆիկացում կամ միջազգային լաբորատորիաների սերտիֆիկատների հաստատում։

1.6.2. Մոնիտորինգ և տեխնիկական վերահսկողություն. Միացնում է խաղային արտադրանքները մոնիտորինգային կենտրոնին, ապահովում է կենտրոնի բնականոն աշխատանքը, իրականացնում է գործարքների ու հաշվառման տվյալների մոնիտորինգ, վերլուծություն ու ռիսկերի գնահատում, տրամադրում է վերահսկող մարմնին հեռահար հասանելիություն։

1.6.3. Քաղաքականություն և ստանդարտներ. Ներկայացնում է առաջարկություններ մոնիտորինգային կենտրոնի տեխնիկական չափանիշների, «պատասխանատու» և «արդար խաղի» կանոնների, ինչպես նաև արտադրանքների ստանդարտների վերաբերյալ։

1.6.4. Համագործակցություն և խորհրդատվություն։ Համագործակցում է պետական մարմինների հետ, տրամադրում է խորհրդատվություն, տեղեկացնում է շուկայի վիճակի, բարելավումների և ռիսկերի մասին, տալիս է կարծիք խաղացողների բողոքների վերաբերյալ։

1.6.5. Կազմակերպիչների հետ փոխհարաբերություններ։ Կնքում է ծառայությունների պայմանագրեր, ապահովում է կազմակերպիչների համար սահմանափակված անձանց վերաբերյալ տվյալների հասանելիություն, հայտնաբերված խախտումների մասին տեղեկացնում է լիազոր մարմիններին։

1.6.6. Ֆինանսական և վարչարարական հարցեր։ Սահմանում և հրապարակում է ծառայությունների գները (առավելագույն շեմի սահմաններում), ապահովում է անձնակազմի «փոխկապակցված չհամարվելու» պահանջը, պահպանում է ստացված տեղեկատվության գաղտնիությունը։

1.6.7. Շուկայի մոնիտորինգ։ Իրականացնում է խաղային շուկայի ընդհանուր մոնիտորինգ՝ ներառյալ խաղանիշերի, շահումների, արտադրանքների և իրադարձությունների վերաբերյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն։

1.7. Սույն Որակավորման Հարցման մեջ մեծատառերով նշված եզրույթները, արտահայտություններն ու հապավումներն ունեն Հավելված 9-ում *(**Սահմանումներ**)* տրված իմաստը, եթե կոնկրետ դրույթի բովանդակությունից չի բխում դրա օգտագործման այլ իմաստ։

1.8. Սույն Որակավորման հարցումը ունի հավելվածներ՝ Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3, Հավելված 4, Հավելված 5, Հավելված 6, Հավելված 7, Հավելված 8, Հավելված 9, որոնք Որակավորման հարցման անբաժանելի մասն են։

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՆԻՇԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2.1. **Ընտրության ընթացակարգի մասնակիցները**

2.1.1. Ընտրության Ընթացակարգի նպատակներից ելնելով՝ երկփուլ ընտրության գործընթացի մասնակիցների հիմնական կատեգորիաներն են՝

a) պոտենցիալ հայտատու կամ թեկնածու (այսուհետ՝ Թեկնածու), այսինքն՝ Որակավորման հայտ ներկայացնելու մտադրություն ունեցող անձինք,

b) Հայտատու, այսինքն՝ Որակավորման Հայտ ներկայացրած, սակայն դեռևս սույն Որակավորման հարցման պայմանների և պահանջների համաձայն չորակավորված Հայտատուները,

c) Որակավորված հայտատու, այսինքն՝ հայտատուներ, որոնք Որակավորման հարցման պայմանների և պահանջների համաձայն որակավորվել են Առաջարկի Հարցման փուլում հայտերի ներկայացման համար։

2.1.2. Թեկնածուն կարող է ներկայացնել Որակավորման Հայտ կամ որպես մեկ իրավաբանական անձ, կամ որպես կոնսորցիում՝ կազմված մի քանի իրավաբանական անձանցից, որոնք համաձայնության են եկել մասնակցել Ընտրության Ընթացակարգին (այսուհետ՝ Կոնսորցիում)։ Մեկ իրավաբանական անձ Թեկնածուները և Կոնսորցիումները կարող են ներառել և՛ ռեզիդենտ, և՛ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց։ Կոնսորցիումն իր բոլոր անդամների հետ պետք է ընկալվի որպես Ընտրության Ընթացակարգի մեկ մասնակից։

2.1.3. Ընտրության Ընթացակարգին միասնական մասնակցության նպատակով թեկնածուները կարող են հիմնադրել հատուկ նշանակության ընկերություն, ինչպես սահմանված է Որակավորման հարցման 2.3 կետով։

2.1.4. Կոնսորցիումը պետք է լիազորի իր անդամներից որևէ մեկին՝ ներկայացնելու Կոնսորցիումին Ընթացակարգի շրջանակում, ներառյալ, սակայն չսահմանափակվելով Կոնսորցիումի անունից Որակավորման Հայտի ներկայացումը (**«Առաջատար Անդամ»**)։ Առաջատար անդամի գործողությունները համարվում են Կոնսորցիումի բոլոր անդամների անունից կատարված, և վերջիններս պետք է ընդունեն Առաջատար անդամի գործողությունները։

2.1.5. Առաջատար Անդամը պետք է՝

a) համապատասխանի Հավելված 5-ով սահմանված որակավորման չափանիշներին, ինչպես նաև սույն Որակավորման հարցմամբ նախատեսված այլ պահանջների, եթե սույն Որակավորման հարցմամբ հատուկ նշված է, որ այդ չափանիշները և պահանջները Առաջատար անդամը պետք է բավարարի անհատապես,

b) Կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքում ունենա առնվազն 50 (հիսուն) տոկոս մասնակցություն։

2.1.6. Կոնսորցիումի մյուս անդամները Կոնսորցիումի մասնակիցների բաժնեմասնակցության կառուցվածքում պետք է ունենան առնվազն 10 (տասը) տոկոս

մասնակցություն։

2.1.7. Եթե Կոնսորցիումը մրցույթի հաղթող է ճանաչվում, ապա Հաղթող Կոնսորցիումի բոլոր անդամները, ընդհանուր առմամբ, պետք է տիրապետեն Օպերատորի ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի 100%-ին, իսկ բաժնեմասնակցությունը պետք է նույնը լինի, ինչ ներկայացված է Կոնսորցիումի հայտում: Օպերատորի հետ Պայմանագրի կնքումից հետո Օպերատորի նկատմամբ բաժնեմասնակցության փոփոխություններ կարող են կատարվել Պայմանագրով սահմանված կարգով։

2.2. **Մասնակցության առանցքային պահանջներ և հավաստումներ**

2.2.1. Թեկնածուները, իսկ կոնսորցիումի դեպքում՝ կոնսորցիումի բոլոր անդամները պետք է համապատասխանեն Հավելված 4-ում *(Թեկնածուների Ընդհանուր Պահանջներ)* նշված պահանջներին։

2.2.2. Թեկնածուները պետք է բավարարեն Հավելված 5-ում (*Որակավորման Չափանիշներ*) նշված Որակավորման Չափանիշները։ Կոնսորցիումով մասնակցության դեպքում Հավելված 5-ով սահմանված որակավորման չափանիշները կարող են բավարարվել Կոնսորցիումի բոլոր անդամների միասնական որակավորումներով, եթե Որակավորման հարցմամբ սահմանված չէ, որ որևէ կոնկրետ չափանիշի պետք է անհատապես համապատասխանեն Կոնսորցիումի բոլոր անդամները։

2.2.3. Որակավորման Չափանիշներին համապատասխանության մանրամասն կանոնները սահմանված են *Հավելված 5-ում (Որակավորման Չափանիշներ)*։ Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին և Որակավորման Չափանիշներին համապատասխանությունը հավաստելու համար (ներառյալ՝ Կոնսորցիումի անդամների միասնական որակավորումների վրա հիմնվելու դեպքում) Թեկնածուները պետք է ներկայացնեն *Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը)* նախատեսված փաստաթղթերը։

2.2.4. Եթե Որակավորման Հայտը ներկայացվում է Կոնսորցիումի կողմից, Առաջատար Անդամը պետք է Կոնսորցիումի անդամներից հավաքի և ներկայացնի բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջվում են *Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը)*՝ որպես միասնական Որակավորման Հայտի մաս։

2.2.5. Կոնսորցիումը կարող է փոփոխել իր կազմը (այդ թվում՝ ավելացնել կամ հեռացնել որևէ Կոնսորցիումի Անդամի) Որակավորման Հայտի Ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առաջ։ Այդ նպատակով Կոնսորցիումը կարող է համարժեք փոփոխություններ ներկայացնել Որակավորման Հայտում (համաձայն կետ 5.3-ի) կամ չեղարկել Որակավորման Հայտը և ներկայացնել նորը (համաձայն կետ 5.4-ի)։

2.2.6. Կոնսորցիումի կազմում փոփոխությունները Որակավորման Հայտերի Ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո արգելվում են։ Այս պահանջի խախտումը հիմք է Որակավորման հայտի մերժման և Հայտատուի՝ Ընտրության Ընթացակարգին մասնակցությունն արգելելու համար։

2.2.7. Որևէ անձ չի կարող լինել կոնսորցիումի անդամ մեկ կոնսորցիումում՝ միաժամանակ հանդիսանալով (կամ իր հետ Փոխկապակցված Ընկերությունը) այլ կոնսորցիումում կոնսորցիումի անդամ կամ առանձին մեկ Հայտատու: Սույն կետով սահմանված արգելքը խախտելու դեպքում Հանձնաժողովը մերժում է ինչպես նման խախտում թույլ տված երկու կոնսորցիումների հայտերը, այնպես էլ այն Հայտատուի՝ անհատապես ներկայացրած հայտը, ով խախտել է սույն պահանջը:

2.2.8. Ընտրության Ընթացակարգի ցանկացած փուլում Հայտատուի վերահսկողության փոփոխությունը (մինչև Պայմանագրի ստորագրումն այն դեպքում, երբ նման Հայտատուն ճանաչվում է հաղթող), որը հանգեցնում է Հայտատուի նկատմամբ Հավելված 4-ով (*Հայտատուներին ներկայացվող Ընդհանուր Պահանջներ*) սահմանված պահանջների և/կամ Հավելված 5-ով (*Որակավորման Չափանիշներ*) սահմանված Որակավորման չափանիշների խախտման, հիմք է Որակավորման Հայտի մերժման և Ընտրության Ընթացակարգին Հայտատուի մասնակցությունն արգելելու համար:

2.3. **Հատուկ նշանակության գործիք**

2.3.1. Ընտրության Ընթացակարգի իրականացմանը համատեղ մասնակցությամբ հետաքրքրված թեկնածուները կարող են ստեղծել հատուկ նշանակության գործիք՝ իրավաբանական անձ, որը հատուկ հիմնադրվում է Ընտրության Ընթացակարգին համատեղ մասնակցության նպատակով (**«ՀՆԳ»**):

2.3.2. ՀՆԳ-ն կարող է գրանցվել Հայաստանում կամ այլ պետությունում՝ հաշվի առնելով Հավելված 4-ով (*Հայտատուներին ներկայացվող Ընդհանուր Պահանջներ*) սահմանված սահմանափակումները: Հայաստանյան ՀՆԳ-ն պետք է հիմնադրվի՝ հաշվի առնելով Կիրառելի Օրենքի պահանջները:

2.3.3. ՀՆԳ-ների և դրանց բաժնետերերի նկատմամբ տարածվում են Ընթացակարգով, Որակավորման հարցմամբ և Առաջարկի հարցմամբ Կոնսորցիումների ու դրանց մասնակիցների համար նախատեսված պահանջները, որակավորման ու գնահատման ընթացակարգերը: ՀՆԳ-ի առաջատար անդամը պետք է անհատապես տիրապետի ՀՆԳ-ի ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի առնվազն 50%+1-ին և ունենա արդյունավետ վերահսկողություն ՀՆԳ-ի տեխնիկական և գործառնական գործունեության նկատմամբ, իսկ մյուս բաժնետերերը կամ մասնակիցները պետք է ունենան նվազագույնը 10 տոկոս բաժնեմասնակցություն: ՀՆԳ-ն և դրա բաժնետերերը պետք է ներկայացնեն բոլոր փաստաթղթերը, որոնք սույն որակավորման հարցման պահանջներին համապատասխան պետք է ներկայացնեն կոնսորցիումի անդամները՝ այնքանով, որքանով այդ պահանջները կարող են կիրառելի լինել ՀՆԳ-ի նկատմամբ:

2.3.4. Որակավորման Հայտը պետք է հստակորեն մատնանշի, որ հայտատուն ՀՆԳ է, ինչպես նաև նշի Առաջատար Անդամին և մյուս Անդամներին՝ որպես ՀՆԳ-ի բաժնետերեր՝ նշելով Առաջատար անդամի և մյուս անդամներից յուրաքանչյուրի մասնակցության չափը ՀՆԳ-ում: Հայտում այդ նշումը չլինելու դեպքում հայտը դիտվում է

ոչ թե որպես ՀՆԳ-ի ներկայացրած հայտ, այլ որպես Թեկնածուի կողմից անհատապես ներկայացված հայտ։

2.3.5. ՀՆԳ-ի՝ հաղթող հայտատու ճանաչվելու դեպքում հիմնադրվող իրավաբանական անձի (Օպերատորի) ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի 100 տոկոսը Պայմանագրի կնքման պահին պետք է տիրապետի ՀՆԳ-ն, իսկ ՀՆԳ-ի նկատմամբ բաժնեմասնակցությունը պետք է նույնը լինի, ինչ ներկայացված է ՀՆԳ-ի հայտում։ Պայմանագրի կնքումից հետո ՀՆԳ-ի և Օպերատորի նկատմամբ բաժնեմասնակցության փոփոխություններ կարող են կատարվել Պայմանագրով սահմանված կարգով։

2.4. **Օպերատորը**

2.4.1. Ընտրության Ընթացակարգի հաղթող ճանաչված Հայտատուն պարտավոր է մրցույթի արդյունքների հրապարակումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստեղծել առևտրային կազմակերպություն և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման։ Նշված ընկերության հիմնադրման հետ կապված կանոնները հետագայում հստակեցվում են Առաջարկի հարցմամբ։

2.4.2. Պայմանագրի կնքման պահին միանձնյա հաղթողը պետք է անհատապես տիրապետի Օպերատորի ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի 100%-ին և ունենա արդյունավետ վերահսկողություն Օպերատորի տեխնիկական և գործառնական գործունեության նկատմամբ։

2.4.3. Եթե հաղթողը Կոնսորցիում է, ապա Պայմանագրի կնքման պահին Հաղթող Կոնսորցիումի բոլոր անդամները, ընդհանուր առմամբ, պետք է տիրապետեն Օպերատորի ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի 100%-ին, իսկ բաժնեմասնակցությունը պետք է նույնը լինի, ինչ ներկայացված է Կոնսորցիումի հայտում՝ Որակավորման հարցման 2.1.5-2.1.6 ենթակետերով սահմանված պահանջների պահպանմամբ։

2.4.4. Պայմանագրի կնքումից հետո Օպերատորի նկատմամբ բաժնեմասնակցության փոփոխություններ կարող են տեղի ունենալ Օրենքով և Պայմանագրով սահմանված կարգով։ Պայմանագրի կնքումից հետո Հաղթող հայտատուի, իսկ եթե հաղթող հայտատուն կոնսորցիում է, ապա Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի նկատմամբ բաժնեմասնակցության փոփոխություններ կարող են կատարվել Պայմանագրով սահմանված կարգով։

2.5. **Լիազորված անձինք**

2.5.1. Լիազորված անձինք այն անձինք են, ովքեր Թեկնածուի (Հայտատուի) կողմից սույն Որակավորման հարցման Հավելված 6-ին համապատասխան տրված լիազորագրի հիման վրա իրավունք ունեն ներկայացնելու Թեկնածուին (Հայտատուին) Օպերատորի ընտրության ընթացակարգում, այդ թվում՝ ներկայացնելու որակավորման հայտ կամ առաջարկի հարցման փուլի հայտ, ստորագրելու հայտերը, իրականացնելու Օպերատորի

ընտրության ընթացակարգին Թեկնածուի (Հայտատուի) լիարժեք մասնակցությունն ապահովելուն ուղղված այլ գործողություններ: Հայտատուն կարող է առաջադրել մինչև տասը (10) Լիազորված անձանց: Որակավորման հայտին կից պետք է ներկայացվի լիազորված անձանց ցուցակը՝ լիազորությունները հավաստող փաստաթղթերի հետ միասին:

2.6. **Հանձնաժողովը**

2.6.1. Հանձնաժողովը Օպերատորի ընտրության մրցույթի անցկացման աշխատանքները կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողովն է, որի կազմը հաստատվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 28.07.2025թ. թիվ 670-Լ որոշմամբ:

2.6.2. Հանձնաժողովը հաստատում է սույն Որակավորման հարցումը, առաջարկի հարցումը, գնահատում է ներկայացված հայտերը, իրականացնում է Օրենքով, Ընթացակարգով, սույն Որակավորման հարցմամբ և առաջարկի հարցմամբ սահմանված այլ լիազորություններ:

2.6.3. Հանձնաժողովի անդամները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցեն որևէ Որակավորման Հայտի պատրաստման և/կամ ներկայացման գործընթացին և չպետք է տրամադրեն որևէ աջակցություն որևէ Թեկնածուի այդ նպատակներով:

2.6.4. Հանձնաժողովի անդամները պետք է լինեն անկախ և անկողմնակալ իրենց իրավասության շրջանակներում որոշումների կայացման ընթացքում և չպետք է ունենան Շահերի բախում որևէ Հայտատուի հետ:

2.6.5. Հանձնաժողովի նախագահը, անդամները, քարտուղարը և նիստին մասնակցած այլ անձինք պետք է զերծ մնան Հանձնաժողովի նիստերին քննարկված այն հարցերը հրապարակայնացնելուց, որոնք որևէ կերպ կարող են բացասաբար ազդել մրցութային գործընթացի՝ բոլոր հավանական թեկնածուների համար հավասարության պայմաններում անցկացման վրա: Ընդ որում, Հանձնաժողովի նախագահի, անդամների, քարտուղարի և նիստին մասնակցած այլ անձանց վրա այս արգելքը տարածվում է՝ անկախ նիստը դռնբաց կամ դռնփակ անցկացված լինելու հանգամանքից: Նշված արգելքի խախտման դեպքում խախտող անձինք պարտավոր են հատուցել Հայտատուներին, Հանձնաժողովին, Վերահսկող մարմնին, պետությանը կամ այլ անձանց պատճառված մասը:

2.7. **Խորհրդատուները**

2.7.1. Հանձնաժողովը կարող է հրավիրել արտաքին խորհրդատուների՝ ընտրության գործընթացում և Պայմանագրի ստորագրման ժամանակ իրենց իրավասության

շրջանակներում համապատասխան հարցերի վերաբերյալ խորհրդատվություն և այլ աջակցություն տրամադրելու նպատակով (այսուհետ՝ Խորհրդատուներ):

2.7.2. Խորհրդատուները կարող են ներկա գտնվել Հանձնաժողովի նիստերին, տրամադրել բացատրություններ և խորհրդատվություն այդ նիստերի ընթացքում, ուսումնասիրել և դիտարկումներ ներկայացնել Հայտատուների կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ, Հանձնաժողովի արձանագրությունների վերաբերյալ, ինչպես նաև պայմանագրի ստորագրման ընթացքում առկա փաստաթղթերի վերաբերյալ: Խորհրդատուները կրում են իրենց հայտնի դարձած տեղեկության գաղտնիության պահպանման պարտականությունը, ինչպես Հանձնաժողովի անդամները:

2.7.3. Խորհրդատուները Հանձնաժողովի անդամ չեն և չունեն քվեարկելու իրավունք:

2.8. Հաղորդակցություն

2.8.1. Սույն Որակավորման հարցմամբ նախատեսված ողջ հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային կապի միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Ընթացակարգով կամ սույն որակավորման հարցմամբ: Հայտատուների հետ հաղորդակցման պատասխանատուն Հանձնաժողովի նախագահը և քարտուղարն են (այսուհետ՝ Լիազորված պաշտոնյաներ):

3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

3.1. **Որակավորման Հայտերի ձևաչափի և բովանդակության ընդհանուր պահանջները**

3.1.1. Թեկնածուները պետք է պատրաստեն Որակավորման Հայտերը *Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը) սահմանված ձևաչափին և բովանդակային պահանջներին համապատասխան:* Յուրաքանչյուր Թեկնածու, ներառյալ՝ Կոնսորցիումը, կարող է ներկայացնել միայն մեկ (1) Որակավորման Հայտ:

3.1.2. Թեկնածուները որակավորման Հայտերը ներկայացնում են թղթային տարբերակով Հանձնաժողովին առձեռն հանձնելու միջոցով:

3.1.3. Որակավորման Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված պահանջներին համապատասխան: Յուրաքանչյուր Թեկնածու պետք է պատրաստի և ներկայացնի իր Որակավորման Հայտը չորս (4) օրինակից, որոնցից՝

a) մեկ թղթային օրինակը հստակ ընթեռնելի «ԲՆՕՐԻՆԱԿ» նշմամբ պետք է պարունակի սույն որակավորման հարցմամբ սահմանված բոլոր փաստաթղթերի բնօրինակները,

b) որակավորման ամբողջական հայտի մեկ թղթային պատճենը՝ հստակ ընթեռնելի «ՊԱՏՃԵՆ» նշմամբ,

c) երկու էլեկտրոնային օրինակ՝ յուրաքանչյուր օրինակը ներկայացված

տվյալների պահպանման առանձին USB էլեկտրոնային կրիչներով։

3.1.4. Որակավորման Հայտի թղթային բնօրինակի, թղթային պատճենի կամ էլեկտրոնային տարբերակի միջև անհամապատասխանության առկայության դեպքում կիրառվում է բնօրինակը։ Նման տարբերությունը չի կարող Որակավորման Հայտը մերժելու հիմք լինել։

3.1.5. Որակավորման Հայտի բոլոր էջերը, ինչպես նշված է *Հավելված 6-ի (Որակավորման Հայտի բովանդակությունը)* բովանդակային պահանջներում, պետք է համարակալված և ստորագրված լինեն Լիազոր անձի կողմից։

3.1.6. Որակավորման Հայտերի էլեկտրոնային պատճենները պետք է նույնական լինեն բնօրինակ Որակավորման Հայտի թղթային տարբերակի բովանդակությանը, զերծ լինեն վիրուսներից կամ վնասակար ծրագրերից և պետք է պարունակեն չսեղմված կամ չպաշտպանված ֆայլեր՝ տպելի և վերարտադրելի PDF ձևաչափով։

3.1.7. Թեկնածուներն իրենց Որակավորման Հայտերում չպետք է ներկայացնեն որևէ տեղեկատվություն կամ փաստաթուղթ, որոնք ակնհայտորեն չեն պահանջվում սույն Որակավորման հարցմամբ։ Սույն որակավորման հարցմամբ չնախատեսված փաստաթղթերի ներկայացումը ինքնին հայտը մերժելու հիմք չէ, բացառությամբ գնային առաջարկ ներկայացնելու դեպքի, ինչպես նաև այնպիսի նյութերի, որոնք սահմանափակում են մրցակցությունը և տվյալ հայտատուին մյուսների համեմատ դնում էականորեն առավել բարենպաստ վիճակում։ Նման դեպքերում հայտը մերժվում է։

3.2. Որակավորման Հայտերի կնքումը և նշագրումը

3.2.1 Թեկնածուն պետք է ներկայացնի Որակավորման Հայտը անթափանց և պատշաճ կերպով կնքված ծրարով։ Ծրարը պետք է պարունակի Որակավորման Հայտի չորս (4) օրինակները։ Ծրարի վրա որևէ Պաշտոնական լեզվով նշվում են՝

1) վերահսկող մարմնի անվանումը և հայտի ներկայացման վայրը.
2) օպերատորի ընտրության ընթացակարգի ծածկագիրը.
3) «չբացել մինչև որակավորման հայտերի բացման նիստը» բառերը.
4) հայտատուի տվյալները՝ անվանումը, գրանցման վայրը, կապի միջոցները։

3.2.2. Եթե Որակավորման Հայտը կազմող փաստաթղթերի ծավալը անհնար է դարձնում նման Որակավորման Հայտի բոլոր չորս (4) օրինակների՝ մեկ (1) ծրարով ներկայացումը, Թեկնածուն կարող է Որակավորման Հայտի օրինակները տեղադրել երկու (կամ ավելի՝ ըստ անհրաժեշտության) տարբեր անթափանց և պատշաճ փակված ծրարներում՝ նշագրված Որակավորման հարցման 3.2.1-ին ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ՝ յուրաքանչյուր ծրարի վրա ավելացնելով նաև հերթական համար։ Այս դեպքում երկու էլեկտրոնային կրիչներից յուրաքանչյուրը տեղադրվում է մեկ ծրարում։ Յուրաքանչյուր ծրարի վրա նշվում է համապատասխանաբար «Բնօրինակ» կամ «Պատճեն»։

3.2.3. Եթե հնարավոր չի եղել Որակավորման հայտի բոլոր 4 (չորս) օրինակները տեղադրել մեկ ծրարի մեջ, և օգտագործվել են մեկից ավելի ծրարներ, ապա այդ բոլոր

ծրարները, որպես մեկ փաթեթ, տեղադրվում են անթափանց և պատշաճ փակված փոստային արկղում։ Փոստային արկղի վրա պետք է նշվեն Որակավորման հարցման 3.2.1-ին ենթակետով պահանջվող տվյալները։

3.2.4. Եթե Որակավորման Հայտի ծրար(ներ)ը կամ փոստային արկղը չեն համապատասխանում սույն Որակավորման հարցմամբ սահմանված պահանջներին, ապա Հանձնաժողովն է գնահատում, թե արդյոք կարիք կա ծանուցել Հայտատուին թերությունը շտկելու վերաբերյալ։ Եթե Հանձնաժողովը գտնում է, որ շեղումը ոչ էական է և դրա շտկման անհրաժեշտությունը բացակայում է, ապա այդ տեսքով գնահատում է հայտը։

3.3. **Որակավորման Հայտերի և հաղորդակցության լեզուն**

3.3.1. *Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը)* այլ բան նախատեսված չլինելու դեպքում Որակավորման Հայտի և հաղորդակցության լեզվի վերաբերյալ գործում են հետևյալ կանոնները.

a) Որակավորման Հայտի մաս կազմող բոլոր փաստաթղթերը և ձևաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով։

b) Եթե Հայտի շրջանակներում ներկայացված փաստաթղթերն ի սկզբանե կազմվել (ձևակերպվել են) օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով), ապա այդպիսի փաստաթղթերը պետք է ներկայացվեն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով թարգմանության հետ միասին՝ *Հավելված 6-ով (Որակավորման Հայտի Բովանդակությունը) սահմանված* պահանջներին համապատասխան։

c) Որակավորման Հայտի հետ կապված ողջ հաղորդակցությունը պետք է իրականացվի Պաշտոնական Լեզուներից որևէ մեկով։

3.3.2. Օտար լեզվով կազմված՝ Պաշտոնական լեզուներից որևէ մեկով թարգմանված փաստաթղթի օտար լեզվի և Պաշտոնական լեզվով թարգմանության միջև հակասության դեպքում հիմք է ընդունվում թարգմանությունը։

3.4. **Գաղտնի տեղեկատվություն**

3.4.1. Հայտատուն իրավունք ունի Հայտի որոշ մասեր սահմանել որպես գաղտնի տեղեկատվություն պարունակող։ Սա պետք է ապահովվի նման տեղեկատվություն պարունակող Հայտի յուրաքանչյուր էջի վրա տեղադրելով «ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ» արտահայտությունը։ Որակավորված հայտատուն կարող է Հայտի յուրաքանչյուր էջի վրա ընդգծել տեղեկատվության կոնկրետ հատվածներ, որոնք համարում է գաղտնի։ Սույն կետը չի արգելում Հանձնաժողովին Հայտը ներկայացնել խորհրդատուներին։

3.4.2. Հանձնաժողովը և խորհրդատուները պետք է պատշաճ կերպով պահպանեն հայտում որպես գաղտնի նշված տեղեկատվությունը, չտրամադրեն երրորդ անձանց, չհրապարակեն և միջոցներ ձեռնարկեն դրա պաշտպանության համար։

3.4.3. Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի շրջանակներում հանձնաժողովի գործողությունների (անգործության) կամ որոշումների վիճարկման վերաբերյալ դատական գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձը իր դատական պաշտպանության նպատակով կարող է ներկայացնել իր տիրապետության տակ եղած տեղեկությունները կամ ապացույցները և միաժամանակ միջնորդել գործի քննությունը իրականացնել դռնփակ նիստում։

3.5. **Որակավորման Հայտերի ճշգրտության և ամբողջականության պատասխանատվությունը**

3.5.1. Հայտատուն պատասխանատու է Հայտում ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության տրամադրման համար։ Հայտը ներկայացնելով՝ Որակավորված հայտատուն նաև ընդունում է, որ.

(ա) Հայտում զետեղված ողջ տեղեկատվությունը չի փոփոխվել Ընտրության ընթացակարգի ողջ ընթացքում՝ մինչև Պայմանագրի կնքումը (Որակավորված հայտատուի՝ հաղթող ճանաչվելու դեպքում),

(բ) Ընտրության ընթացակարգի ցանկացած փուլում Հանձնաժողովը կարող է որակազրկել Հայտատուին, ինչպես նաև Վերահոսկող մարմինը կարող է հրաժարվել Պայմանագրի ստորագրումից, եթե պարզվի, որ Հայտատուն իր հայտում կամայականորեն ներկայացրել է սխալ կամ կեղծ տեղեկություններ,

(գ) Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում Հայտում պարունակվող տեղեկությունների ճշգրտության և ամբողջականության համար։

4. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԲԱՑՈՒՄԸ

4.1. **Որակավորման Հայտերի ներկայացման վերջնաժամկետը և կողմնորոշիչ ժամանակացույցը**

4.1.1. Թեկնածուները Որակավորման հայտերը պետք է ներկայացնեն Վերահսկող և Լիազոր մարմինների կայքերում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքում Որակավորման հարցման հրապարակման օրվանից քառասուն (40) օրվա ընթացքում (**«Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետ»**)։ Որակավորման Հայտերը ցանկացած պարագայում պետք է ներկայացվեն Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետի վերջին օրվա ժամը 18:00-ից ոչ ուշ։ Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից հետո ներկայացված ցանկացած հայտ չի դիտարկվի։

4.1.2. Ընտրության Ընթացակարգի հիմնական արդյունքների և դրանց կողմնորոշիչ ժամանակացույցը սահմանվում է սույն Որակավորման հարցման *Հավելված 2-ում (Կողմնորոշիչ Ժամանակացույց)։* Թեկնածուները կարող են օգտագործել

Կողմնորոշիչ Ժամանակացույցը, սակայն այն ունի միայն խորհրդատվական բնույթ։

4.1.3. Հանձնաժողովը կարող է իր հայեցողությամբ փոփոխել Կողմնորոշիչ Ժամանակացույցը։ Հանձնաժողովը պետք է ծանուցի Թեկնածուներին Կողմնորոշիչ Ժամանակացույցի փոփոխությունների վերաբերյալ Վերահսկող և Լիազոր մարմինների պաշտոնական կայքում հրապարակված հայտարարության միջոցով։ Հանձնաժողովը չի կրում որևէ պատասխանատվություն, որը այս կամ այն կերպ ծագում է Կողմնորոշիչ Ժամանակացույցի փոփոխությունից։

4.2. **Որակավորման Հայտերի ներկայացումը և գրանցումը**

4.2.1. Լիազորված անձը պետք է Որակավորման Հայտը առձեռն հանձնի Հանձնաժողովի քարտուղարին։ Լիազորված Անձը պետք է ունենա բնօրինակ նույնականացման փաստաթղթերը և Լիազորող Փաստաթղթերի պատճենները՝ Հանձնաժողովի գտնվելու վայր մուտքը թույլատրելու համար։

4.2.2. Որակավորման հայտը ներկայացվում է միայն առձեռն տարբերակով։ Այլ եղանակով ներկայացված հայտերը չեն քննարկվում։

4.2.3. Հանձնաժողովի քարտուղարը պետք է գրանցի Որակավորման Հայտը իր գրանցամատյանում Լիազորված Անձի ներկայությամբ։ Գրանցելուց առաջ Հանձնաժողովի քարտուղարը ստուգում և հաստատում է, որ Որակավորման Հայտի ծրար(ներ)ը կամ փոստային արկղը և Լիազորված անձի Լիազորող Փաստաթղթերը պատրաստված են Ընթացակարգին և սույն Որակավորմանը Հարցմանը համապատասխան։ Ծրար(ներ)ը կամ փաստային արկղը չպետք է բացվեն Որակավորման Հայտի գրանցման ընթացքում։ Հանձնաժողովի քարտուղարը իր գրանցամատյանում նշում է Ընթացակարգով պահանջվող գրանցման տվյալները, ինչպես նաև՝ Լիազորված անձի տվյալները և Հայտի ծրար(ներ)ի կամ փոստային արկղի պատրաստման պահանջների անհամապատասխանությունները (առկայության դեպքում)։

4.2.4. Որակավորման Հայտի գրանցման ժամանակ Լիազորված Անձը պետք է ստորագրի գրանցամատյանում՝ հավաստելու Որակավորման Հայտի պատշաճ ստացումը և գրանցումը։ Եթե Լիազորված անձը հրաժարվում է ստորագրել, Հանձնաժողովի քարտուղարը պետք է նշում կատարի այդ մասին գրանցամատյանում։

4.2.5. Հանձնաժողվի քարտուղարը պետք է Լիազորված անձին տրամադրի հետևյալ տեղեկատվությունը պարունակող թերթիկ.

a) 4.2.3 կետում նշված գրանցման տվյալները,

b) Որակավորման հայտերի բացման նիստի օրը,

c) Հանձնաժողովի քարտուղարի անունը։

4.2.6. Չեն ընդունվում և չեն գրանցվում այն որակավորման հայտերը, որոնք՝

a) Չեն ներկայացվել առձեռն։ Առձեռնից տարբերվող եղանակով ներկայացված հայտերը առանց բացվելու նույն եղանակով հետ են ուղարկվում Թեկնածուին՝ նշելով

վերադարձի պատճառը.

b) ներկայացվել են Հայտերի ներկայացման ժամանակ պահանջվող նույնականացման փաստաթղթեր կամ Լիազորող Փաստաթղթեր չներկայացրած անձանց կողմից: Այս Որակավորման Հայտերը առանց ծրար(ներ)ը կամ փոստային արկղերը բացելու պետք է վերադարձվեն այն անձին, ով չի ներկայացրել համարժեք նույնականացման փաստաթղթեր կամ Լիազորող Փաստաթղթեր.

c) ներկայացվել են Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետից հետո: Այդ Որակավորման Հայտերը պետք է առանց բացելու վերադարձվեն Թեկնածուին՝ ծանուցելով վերադարձի պատճառի մասին: Որակավորման հայտ ներկայացնելով՝ յուրաքանչյուր Թեկնածու (Հայտատու) համաձայնում և ընդունում է, որ սույն Որակավավորման Հարցման շրջանակներում իր կողմից Որակավորման Հայտի ներկայացումը համարվում է Որակավորման հարցման պայմանների ընդունում:

4.3. **Որակավորման Հայտերի բացումը**

4.3.1. Հանձնաժողովը պետք է Որակավորման Հայտերի բացման նիստ անցկացնի Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը:

4.3.2. Որակավորման հայտերի բացման նիստում Հանձնաժողովը բացում է գրանցված Որակավորման Հայտերի ծրարները և փոստային արկղերը, ներառյալ՝ կատարված փոփոխություններով Որակավորման Հայտերի ծրարները և փոստային արկղերը: Որակավորման հայտերի բացման նիստին կարող են ներկա լինել Հայտատուները: Որակավորման հայտերի բացման նիստում որոշվում է, թե արդյո՞ք Որակավորման Հայտերը՝

a) ամբողջական են, պարունակում են ներկայացման ենթակա փաստաթղթերը և ընդհանուր առմամբ այն հաջորդականությամբ են, որը սահմանված է *Հավելված 6-ում (Որակավորման Հայտի Բովանդակությունը)* և

b) իրենց ձևով և կառուցվածքով համապատասխանում են Որակավորման Հարցման պահանջներին:

4.3.3. Որակավորման Հայտերի բացման նիստը չպետք է ներառի Որակավորման Հայտերի գնահատումը:

4.3.4. Լիազորված անձինք պետք է ունենան նույնականացման բնօրինակ փաստաթղթերը և Լիազորող Փաստաթղթեր՝ Հանձնաժողովի գործունեության վայր մուտք գործելու և Որակավորման Հայտերի բացման նիստին մասնակցելու համար: Այս նիստին մասնակցող Լիազորված անձինք ստորագրում են Հանձնաժողովի քարտուղարի մոտ առկա գրանցամատյանում՝ փաստելով իրենց ներկայությունը: Լիազորված անձի չներկայանալը արգելք չէ նիստն անցկացնելու համար, սակայն այս դեպքում նիստի արձանագրության մեջ քարտուղարը նշում է կատարում Լիազորված Անձի բացակայության մասին:

4.3.5. Որակավորման Հայտերի բացման նիստի արդյունքները արձանագրվում են Հանձնաժողովի Աշխատակարգին համապատասխան:

4.3.6. Որակավորման Հայտերի բացման նիստի արդյունքների հիման վրա Հանձնաժողովը կարող է պահանջել շտկել Որակավորման Հայտերում առկա անհամապատասխանությունները, որի մասին նշում է կատարվում նիստի արձանագրության մեջ: Հանձնաժողովն է որոշում, թե արդյոք անհրաժեշտ է Հայտատուից պահանջել շտկում, թե ոչ, ինչպես նաև՝ արդյոք հնարավոր է տվյալ թերության շտկումը, թե ոչ:

4.3.7. Որակավորման Հայտերի բացման նիստի ավարտից հետո Հանձնաժողովը անցնում է Որակավորման Հայտերի գնահատմանը՝ համաձայն սույն Որակավորման հարցման:

5. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ: ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԵՂԱՐԿՈՒՄԸ

5.1. **Որակավորման Հայտերի հետ կապված հարցումների ընթացակարգը**

5.1.1. Յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ արդեն հայտ ներկայացրած անձինք, իրավունք ունեն Հանձնաժողովին ներկայացնել Որակավորման հարցման հետ կապված՝ պարզաբանման կարիք ունեցող իրենց հարցադրումները՝ ոչ ուշ, քան որակավորման հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետից 20 օրացուցային օր առաջ: Որակավորման հարցման մեջ փոփոխություններ իրականացնելու դեպքում Հանձնաժողովը կարող է սահմանել պարզաբանման կարիք ունեցող հարցադրումների ներկայացման լրացուցիչ ժամկետ:

5.1.2. Հարցման և պարզաբանման բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է Վերահսկող մարմնի պաշտոնական կայքում՝ հարցումը կատարած հայտատուին պարզաբանումը տրամադրելու կամ դրա հաջորդ աշխատանքային օրը, առանց նշելու հարցումը կատարած հայտատուի տվյալները, իսկ օրենքով պահպանվող գաղտնի տեղեկատվության դեպքում պարզաբանումը տրվում է միայն հայտատուներին:

5.1.3. Հանձնաժողովը պարզաբանումները տրամադրում է դրանք ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

5.1.4. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը վերաբերում է որակավորման չափանիշներին հայտատուի համապատասխանության ստուգմանը, դուրս է մրցույթի բովանդակության շրջանակներից կամ հարցումը տրամադրվել է սահմանված ժամկետի ավարտից հետո: Նման հարցում ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը հայտատուին գրավոր տեղեկացնում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին:

5.1.5. Հարցումը կարող է ներկայացվել՝

a) Առձեռն՝ Տեղեկատվական Թերթիկում Հանձնաժողովի նշված հասցեին և

աշխատանքային օրացույցին համապատասխան.

b) Էլեկտրոնային փոստով՝ Տեղեկատվական Թերթիկում նշված՝ Հանձնաժողովի էլեկտրոնային փոստին։

5.1.6. Եթե հարցումը ներկայացվում է առձեռն, հարցումը ներկայացնող անձը պետք է ունենա բնօրինակ նույնականացման փաստաթղթեր և Լիազորող Փաստաթղթերի պատճենները նման հարցում ներկայացնելու նպատակով։

5.1.7. Որակավորման Հայտերի հետ կապված լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների շուրջ հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

a) հարցում ներկայացնող անձի (Թեկնածու) լրիվ անվանումը, գրանցման և կոնտակտային տվյալները,

b) հղում Հայտարարությանը և Որակավորման Հարցմանը,

c) հնարավորության դեպքում՝ Որակավորման հարցման կետը, որի առնչությամբ կատարվում է հարցումը,

d) հստակ ձևակերպված հարցում՝ Որակավորման Հայտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կամ պարզաբանումներ տրամադրելու մասին,

e) հարցումը կատարողի ստորագրությունը,

f) հարցման ամսաթիվը։

5.1.8. Հանձնաժողովը պետք է հարցումների պատասխանը կամ պարզաբանումը տրամադրի բացառապես այն ծավալով, որը, սույն Որակավորման հարցման պահանջներին համապատասխան, անհրաժեշտ է Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման համար։

5.1.9. Հանձնաժողովը նմանատիպ (կրկնվող) հարցումներին կարող է տրամադրել մեկ պատասխան։

5.2. **Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստերը**

5.2.1. Հանձնաժողովը կարող է անցկացնել բաց նիստեր Որակավորման Հայտերի պատրաստման ու ներկայացման հետ կապված Թեկնածուների հարցերը քննարկելու և պարզաբանելու նպատակով։ Հանձնաժողովը բաց նիստեր անցկացնում է իր հայեցողությամբ։

5.2.2. Հանձնաժողովը պետք է հրապարակի Որակավորման Հայտերի հետ կապված բաց նիստերի վերաբերյալ հայտարարությունը Վերահսկող մարմնի պաշտոնական կայքում՝ այդ նիստի անցկացման օրվանից առնվազն 4 օր առաջ։ Հայտարարությունը պետք է մանրամասներ պարունակի յուրաքանչյուր նիստի վերաբերյալ, որը որոշվում է Հանձնաժողովի կողմից, ներառյալ՝ նիստի պլանավորված օրը, ժամը, ձևաչափը (առցանց/անցանց) և վայրը/մուտքի տվյալները։

5.2.3. Թեկնածուները իրավունք ունեն մասնակցելու բաց նիստերին, ինչի մասին պետք է գրավոր ծանուցեն Հանձնաժողովին նիստի անցկացման օրվանից առնվազն երկու (2) օր առաջ։ Այդ ծանուցումը պետք է պարունակի հարցում բաց նիստին

մասնակցության և նիստի ընթացքում Որակավորման Հայտերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների վերաբերյալ: Բաց նիստին մասնակցության ծանուցումը պետք է պատրաստվի և ներկայացվի 5.1.5-5.1.7 կետերի պահանջներին համապատասխան: Բաց նիստին մասնակցության ծանուցումը պետք է պարունակի բաց նիստին մասնակցելու ցանկություն ունեցող Թեկնածուի առավելագույնը մինչև հինգ (5) ներկայացուցիչների անունները և բաց նիստին մասնակցելու համար ներկայացված անձանց նույնականացման փաստաթղթերի պատճենները:

5.2.4. Թեկնածուներին ներկայացնող և բաց նիստին մասնակցող անձինք պետք է ունենան բնօրինակ նույնականացման փաստաթղթեր և Լիազորող Փաստաթղթերի պատճենները Հանձնաժողովի գործունեության վայր մուտքի և նիստին մասնակցության համար: Այդ անձինք պետք է ստորագրեն Հանձնաժողովի գրանցամատյանում՝ փաստելով իրենց մասնակցությունը: Եթե այդ անձինք չեն մասնակցում նիստին, Հանձնաժողովը շարունակում է իրականացնել նիստը առանց նրանց, և այդ անձանց բացակայության մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

5.2.5. Բաց նիստերը պետք է բացառապես նվիրված լինեն Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված հարցերի քննարկմանը՝ Թեկնածուների կողմից նախապես ներկայացված լրացուցիչ տեղեկատվության կամ պարզաբանումների վերաբերյալ հարցումների հիման վրա: Հանձնաժողովը կարող է քննարկել նաև իր գնահատմամբ կարևոր հարցեր, որոնք վերաբերում են Որակավորման հայտերի պատրաստմանը և ներկայացմանը, եթե նույնիսկ այդ հարցի վերաբերյալ հարցում չի ստացվել: Հանձնաժողովը կարող է հետագայում հստակեցնել բաց նիստերի ընթացակարգային մանրամասները (ինչպիսիք են օրակարգը, քննարկման ընթացակարգը և նիստերի ժամանակացույցը) հնարավոր Թեկնածուների ներկայացուցիչների համար այդ նիստերի հայտարարության մեջ և/կամ նիստի բացման հատվածում:

5.2.6. Բաց նիստերը արձանագրվում են:

5.2.7. Հանձնաժողովը պետք է հետագայում հրապարակի Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված՝ բաց նիստի ընթացքում քննարկված և պարզաբանված հարցերի համախմբված պատասխանները Վերահսկող մարմնի պաշտոնական կայքում՝ այդ նիստին հաջորդող երկու (2) աշխատանքային օրերի ընթացքում (պատասխանները պետք է լինեն ապանձնավորված, այսինքն՝ չպետք է հնարավոր լինի նույնականացնել որևէ տեղեկատվություն Թեկնածուների կամ հարցում ներկայացրած այլ անձանց վերաբերյալ):

5.3. **Որակավորման Հայտերում փոփոխությունները**

5.3.1. Հայտատուները Որակավորման Հայտում կարող են փոփոխություններ իրականացնել մինչև Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետը: Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետի ավարտից հետո չի

թույլատրվում որևէ փոփոխություն իրականացնել Որակավորման Հայտում:

5.3.2. Որակավորման Հայտում փոփոխությունները կարող են վերաբերել ողջ Որակավորման Հայտին կամ Որակավորման Հայտի որոշ մասերին կամ այն կազմող փաստաթղթերին՝ համաձայն *Հավելված 6-ում (Որակավորման Հայտի Բովանդակությունը)* տրված կառուցվածքի և կարող են ներառել փոփոխություններ (ձևափոխություններ) և լրացումներ (համալրումներ) Որակավորման Հայտում:

5.3.3. Հայտատուն պետք է Որակավորման հայտի փոփոխությունների բնօրինակը և պատճենները ներկայացնի սույն Որակավորման հարցման 3.1 և 3.2 կետերի պահանջների համաձայն՝ հստակ նշագրելով փոփոխությունների տեսակը («ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ», «ԼՐԱՑՈՒՄ»): Հայտատուն նաև պետք է Որակավորման Հայտի բոլոր փոփոխությունները ամփոփի համեմատական աղյուսակի տեսքով, որի բնօրինակը և պատճենը պետք է պատրաստվեն որպես Որակավորման Հայտի փոփոխությունների բնօրինակի և պատճենների մաս և ներառվեն Հայտի փոփոխությունների ծրար(ներ)ում կամ փոստայի արկղում:

5.3.4. Լիազորված անձը Որակավորման հայտի փոփոխությունները ներկայացնում է Հանձնաժողովի քարտուղարին, որը Լիազորված անձին տրամադրում է Որակավորման Հայտի փոփոխության ստացման փաստը հաստատող գրություն:

5.3.5. Հանձնաժողովի կողմից Որակավորման Հայտերում փոփոխություններ կատարելու՝ սույն Որակավորման հարցմամբ ամրագրված պահանջների պահպանվածության ստուգման, ինչպես նաև փոփոխված Հայտերի գնահատման, ներառյալ՝ թերությունների շտկում պահանջելու և մյուս հարցերի նկատմամբ կիրառվում են Հայտերի համար սույն Որակավորման հարցմամբ սահմանված կանոնները:

5.4. **Որակավորման Հայտերը հետ վերցնելը**

5.4.1. Հայտատուն կարող է հետ վերցնել իր Որակավորման Հայտը՝ Որակավորման Հայտի Ներկայացման Վերջնաժամկետից առաջ: Որակավորման հայտը հետ է վերցվում հետևյալ պահանջների պահպանմամբ՝

a) Հայտատուն պետք է պատրաստի գրավոր ծանուցում Որակավորման Հայտը հետ վերցնելու մասին: Ծանուցմամբ պետք է հստակ նշվեն «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ» բառերը, ինչպես նաև նշվեն համապատասխան Թեկնածուի լրիվ անվանումն ու կնտակտային տվյալները:

b) Լիազորված անձը Հայտի հետկանչման ծանուցումը ներկայացնում է Հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը Լիազորված անձին ներկայացնում է Հայտի հետկանչման մասին ծանուցման ստացման գրավոր հաստատումը և Հայտի չբացված արտաքին ծրար(ներ)ը կամ փոստային արկղը վերադարձնում Լիազորված անձին:

5.4.2. Որակավորման Հայտը չեղարկած Թեկնածուն կարող է ներայացնել մեկ այլ Որակավորման Հայտ Որակավորման Հայտերի Ներկայացման Վերջնաժամկետը

լրանալուց առաջ՝ սույն Որակավորման հարցման պահանաջների պահպանմամբ։

6.ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6.1. **Որակավորման Հայտերի գնահատման վերջնաժամկետը**

6.1.1. Հանձնաժողովը պետք է գնահատի Որակավորման Հայտերը և որոշում կայացնի որակավորված Հայտատուների ցանկի վերաբերյալ Որակավորման Հայտերի բացման նիստից հետո երեսուն (30) օրվա ընթացքում (**«Որակավորման Հայտերի Գնահատման Վերջնաժամկետ»**)։

6.2. **Որակավորման Հայտերի գնահատման ընթացակարգը**

6.2.1. Հանձնաժողովը պետք է անցկացնի Որակավորման Հայտերի գնահատման նիստեր կամ հանդիպումներ Որակավորման Հայտերի Գնահատման Վերջնաժամկետի շրջանակներում։ Որակավորման հայտերի գնահատման ընթացքում Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն միմյանց միջև անցկացնելու աշխատանքային քննարկումներ հայտերի գնահատմանը վերաբերող հարցերի շուրջ, որոնք չեն համարվում Հանձնաժողովի նիստեր։

6.2.2. Հայտերի Գնահատման նիստերը պետք է ներառեն յուրաքանչյուր Որակավորման հայտի մանրամասն գնահատում՝ որոշելու՝ արդյո՞ք Որակավորման Հայտը համապատասխանում է Հավելված 4-ի *(Հայտատուների նկատմամբ Ընդհանուր Պահանջներ) պահանջներին* և բավարարո՞ւմ է Որակավորման Պահանջները՝ ըստ *Հավելված 5-ի Որակավորման Չափանիշների, ինչպես նաև կան արդյոք հայտը մերժելու՝Օրենքով, Ընթացակարգով և/կամ Որակավորման հարցմամբ սահմանված այլ հիմքեր։* Հանձնաժողովը ամփոփում է Որակավորման Հայտերի գնահատման արդյունքները Հանձնաժողովի նիստի ժամանակ, որը պետք է լինի բաց Թեկնածուների և նրանց Լիազորված Անձանց մասնակցության համար, բացառությամբ Հանձնաժողովի Աշխատակարգով սահմանված դեպքերի։

6.2.3. Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների հիման վրա և հաշվի առնելով Օրենքի, Ընթացակարգի և սույն Որակավորման հարցման պահանջներն ու պայմանները՝ Հանձնաժողովը պետք է որոշի Որակավորման Հայտը բավարար կամ ոչ բավարար լինելու հարցը։

6.2.4. Որակավորման Հայտը, որը համապատասխանում է Հավելված 4-ով սահմանված ընդհանուր պահանջներին, Հավելված 5-ով սահմանված որակավորման չափանիշներին, ինչպես նաև առկա չեն որակավորման հայտը մերժելու՝ Օրենքով, Ընթացակարգով և/կամ Որակավորման հարցմամբ սահմանված այլ հիմքեր, պետք է Հանձնաժողովի կողմից գնահատվի բավարար, իսկ այդ պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ ոչ բավարար։

6.2.5. Հանձնաժողովը կարող է եզրակացնել, որ Որակավորման Հայտը ոչ բավարար է և ենթակա է մերժման, եթե.

a) Որակավորման Հայտը չի ներառում սույն Որակավորման հարցմամբ պահանջվող փաստաթղթերը կամ տեղեկությունները կամ նման փաստաթղթերը և/կամ տեղեկություններն ամբողջական չեն (այդ թվում Որակավորման հարցման 6.4-6.5 կետերով նախատեսված գործընթացներն անցնելուց հետո).

b) Որակավորման Հայտը պարունակում է կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր.

c) Որակավորման Հայտը պարունակում է տեղեկատվություն կամ փաստաթղթեր Հայտատուի գնային առաջարկի վերաբերյալ կամ պարունակում է սույն Որակավորման հարցմամբ չնախատեսված այնպիսի փաստաթղթեր, տեղեկություններ կամ նյութեր, որոնք սահմանափակում են մրցակցությունը և տվյալ հայտատուին մյուսների համեմատ դնում էականորեն առավել բարենպաստ վիճակում.

d) Հավելված 4-ով *(Ընդհանուր Պահանջներ Հայտատուների նկատմամբ)* Հայտատուների նկատմամբ սահմանված ընդհանուր պահանջները, *Հավելված 5-ով (Որակավորման Չափանիշներ)* սահմանված Որակավորման Չափանիշները կամ Թեկնածուների, Կոնսորցիումի Անդամների կամ դրանց Փոխկապակցված Ընկերությունների վերաբերյալ սույն Որակավորման հարցմամբ սահմանված այլ պահանջները բավարարված չեն,

e) Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ գործարար ծրագիրն անիրատեսական է, կամ, գործելով ծրագրին համապատասխան, հայտատուն չի կարող ապահովել շուկայի բնականոն գործունեությունը.

f) Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ հայտատուի հիմնադրի, բաժնետիրոջ, փայատիրոջ, մասնակցի, իրական շահառուի կամ նրանց հետ փոխկապակցված անձի գործունեությունը, ֆինանսական վիճակը, բացասական հեղինակությունը կարող են վտանգել ոլորտի կարգավորումը կամ խոչընդոտել Օպերատորի կողմից շուկայի բնականոն կազմակերպումը կամ Վերահսկող մարմնի կողմից պատշաճ վերահսկողության իրականացումը:

g) Առկա են սույն Որակավորման հարցման, Ընթացակարգով կամ Կիրառելի Օրենքով սահմանված այլ հիմքեր Որակավորման Հայտի մերժման համար:

6.2.6. Գնահատման արդյունքները հայտարարվում են Հանձնաժողովի՝ գնահատման արդյունքների ամփոփման նիստի ժամանակ (որն անցկացվում է համաձայն Տեղեկատվական Թերթիկի):

6.3. Գնահատման գաղտնիությունը

6.3.1. Որակավորման Հայտերի գնահատման հետ կապված տեղեկատվությունը չպետք է բացահայտվի Հայտատուների կամ որևէ այլ անձի համար, որոնք պաշտոնապես առնչություն չունեն գնահատման գործընթացի հետ՝ մինչև որակավորված Հայտատուների ցանկի հրապարակումը և Հայտատուներին Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ ծանուցումների ներկայացումը:

6.3.2. Հայտատուի կողմից Հանձնաժողովի կամ Վերահսկող մարմնի հետ բանակցելու կամ գնահատման արդյունքների վրա ազդեցություն ունենալու ցանկացած փորձ Որակավորման Հայտերի գնահատման գործընթացում հանգեցնում է Որակավորման Հայտի մերժման:

6.4. **Որակավորման հայտերի պարզաբանումը**

6.4.1. Մինչև Որակավորման Հայտերի գնահատման վերջնաժամկետի ավարտը Հանձնաժողովը կարող է Հայտատուից պահանջել Որակավորման Հայտի առնչությամբ բովանդակային հարցերի շուրջ պարզաբանումներ (6.5 կետով նախատեսված՝ անհամապատասխանությունների շտկման գործընթացից զատ)՝ սույն Որակավորման հարցման համաձայն դրա ամբողջականությունը կամ համապատասխանությունը որոշելու կամ Որակավորման Հայտը գնահատելու նպատակով:

6.4.2. Հանձնաժողովը Հայտատուին պարզաբանման հարցումը կարող է հանձնել առձեռն տարբերակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

6.4.3. Պարզաբանման հարցումը պետք է պարունակի այն հարցադրումները, որոնց կապակվությամբ Հանձնաժողովը ցանկանում է պարզաբանում ստանալ, ինչպես նաև պարզաբանման տրամադրման կարգը և ժամկետը:

6.4.4. Թեկնածուն (Հայտատուն) պետք է տրամադրի պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողովին՝ պարզաբանման հարցումը ստանալու օրվանից հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

6.4.5. Պարզաբանման հարցմանն ի պատասխան Թեկնածուի (Հայտատուի) կողմից տեղեկատվության (պարզաբանման) չտրամադրման դեպքում Որակավորման հայտի գնահատումը կատարվում է «ինչպես որ կա» սկզբունքով:

6.4.6. Որակավորման Հայտերի պարզաբանումը և դրա պատասխանը չեն կարող հանգեցնել Որակավորման Հայտում որևէ փոփոխության:

6.5. **Որակավորման Հայտերում փոքր անհամապատասխանությունները**

6.5.1. Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության կարող է նախաձեռնել Որակավորման Հայտերում Անհամապատասխանությունները շտկելու նպատակով գործողություններ: Հանձնաժողովը պետք է այս մասին ծանուցում ուղարկի Հայտատուին առձեռն հանձնելու տարբերակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Ծանուցումը պարունակում է նշում Հայտատուի կողմից թույլ տրված անհամապատասխանությունների, ինչպես նաև դրանց շտկման և ներկայացման կարգի և ժամկետի մասին:

6.6. **Որակավորման Հայտերի հետ կապված երրորդ անձանց հարցումները**

6.6.1. Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, կարող է հարցմամբ դիմել ցանկացած պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, ֆինանսական

հաստատության կամ որևէ այլ մարմնի կամ անձի՝ Որակավորման Հայտում պարունակվող տեղեկատվության և/կամ փաստաթղթերի ճշգրտության մեջ հավաստիանալու կամ Որակավորման Հայտի ամբողջականությունն ու համապատասխանությունը հստակեցնելու կամ գնահատելու հետ կապված հանգամանքները պարզելու համար:

6.7. **Որակավորված հայտատուների ցանկ**

6.7.1. Որակավորման Հայտերի գնահատման արդյունքներով Հանձնաժողովը պատրաստում և հաստատում է Որակավորված հայտատուների ցանկը, որոնք որակավորվում են Առաջարկի հարցման փուլին մասնակցելու համար (**«Որակավորման ցանկ»**): Հանձնաժողովը պետք է հաստատի Որակավորման ցանկը փակ նիստում:

6.7.2. Որակավորված հայտատուների ցանկը հաստատելու վերաբերյալ որոշման կայացման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը Վերահսկող մարմնի պաշտոնական կայքում հրապարակում է որակավորված հայտատուների ցանկը:

7. ԱՌԱՋԱՐԿԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՒԼԻՆ ԱՆՑՈՒՄԸ

7.1. **Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների ծանուցումը**

7.1.1. Որակավորման Ցանկի հրապարակման օրվանից հետո երկու (2) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը պետք է Որակավորման Հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ ծանուցումներն ուղարկի Հայտատուներին, մասնավորապես՝

a) Որակավորման հայտի մերժման մասին ծանուցում՝ մերժման հիմքերի ներկայացմամբ և հիմնավորմամբ, կամ

b) Առաջարկի հարցման փուլում մրցութային գործընթացին Հայտատուների որակավորման վերաբերյալ ծանուցումները:

7.1.2. Հանձնաժողովը պետք է 7.1.1 կետում նշված ծանուցումներն ուղարկի Հայտատուների նշած էլեկտրոնային փոստի հասցեին կամ տրամադրի առձեռն:

7.2. **Գաղտնիության Նախաձեռնության ստորագրումը**

7.2.1. Սույն որակավորման Հարցման 7.1 կետի համաձայն՝ մրցութային գործընթացին մասնակցության որակավորման վերաբերյալ ծանուցումներին զուգահեռ՝ որակավորված Հայտատուներին Հանձնաժողովը պետք է ուղարկի նաև Չբացահայտման Համաձայնագրի (կամ Գաղտնիության նախաձեռնության) երկու (2) օրինակ: Չբացահայտման Համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ Ընտրության ընթացակարգին առնչվող գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն ունենալու համար բոլոր որակավորված Թեկնածուները պետք է՝

a) լրացնեն պահանջվող տվյալները Չբացահայտման համաձայնագրի երկու

(2) օրինակներում.

b) ներկայացնեն ստորագրված Չբացահայտման համաձայնագիրը Հանձաժողովի քարտուղարին Լիազորված Անձանց միջոցով:

7.2.2. Ներկայացված Չբացահայտման համաձայնագիրն ստանալուց հետո Հանձնաժողովի քարտուղարը պետք է գրավոր հաստատում ներկայացնի Լիազորված Անձին այն ստանալու վերաբերյալ:

7.2.3. Հանձնաժողովը Չբացահայտման համաձայնագրի օրինակները ստանալուց հետո մեկ (1) աշխատանքային օրվա ընթացքում Հայտատուին ուղարկում է հետևյալը՝

a) Ընտրության ընթացակարգին առնչվող գաղտնի տվյալներին հասանելիությունը հավաստելու մասին ծանուցումը, ներառյալ գաղտնի տեղեկատվության հասանելիության համար անհրաժեշտ մանրամասները,

b) Ընտրության ընթացակարգին առնչվող գաղտնի տվյալներին հասանելիություն շնորհելը մերժելու ծանուցումը՝ մերժման վերաբերյալ հիմնավորումներով, և վերանայված Չբացահայտման համաձայնագրի ստորագրված տարբերակը ստանալու ակնկալվող պայմանների նշումով՝ անրաժեշտ ճշգրտումներով, եթե որակավորված Թեկնածուի կողմից ուղարկված օրինակները չեն համապատասխանում Հավելված 7-ում (*Գաղտնիության Նախաձեռնության Չև*) սահմանված Գաղտնիության Նախաձեռնության պահանջներին:

7.2.4. Որակավորված Թեկնածուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները Գաղտնիության Նախաձեռնության վերանայված տարբերակն անհրաժեշտ ճշգրտումներով ամենակարճ ժամանակահատվածում ուղարկելու համար՝ կետ 7.2.1-ում սահմանված ընթացակարգերին համապատասխան: Գաղտնիության Նախաձեռնության վերանայված տարբերակը ստանալուց հետո Հանձնաժողովը կարող է ուղարկել կետ 7.2.3-ի ենթակետեր (a)-ում կամ (b)-ում նշված ծանուցումներից որևէ մեկը:

7.2.5. Գաղտնիության Նախաձեռնության ստորագրման ու ներկայացման ընդհանուր ժամանակահատվածը չպետք է գերազանցի Որակավորման ցանկը հրապարակելու օրվանից հետո յոթ (7) աշխատանքային օրը:

7.3. **Աշխատանքային քննարկումները.**

7.3.1. Հանձնաժողովը՝ Առաջարկի Հարցման փուլին արդյունավետ պատրաստվելու նպատակով ապահովում է աշխատանքային քննարկումների անցկացում որակավորված Հայտատուների հետ: Աշխատանքային քննարկումները Հանձնաժողովի որոշմամբ կարող են կազմակերպվել նաև հեռավար՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ: Սույն կետով նախատեսված աշխատանքային քննարկումների ժամանակ Հանձնաժողովը պետք է ապահովի բոլոր որակավորված հայտատուների միաժամանակյա մասնակցության հավասար հնարավորություն, ինչպես նաև ապահովի այդպիսի քննարկումների

արձանագրությունների վարումը՝ դրանք քննարկմանը հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելով բոլոր որակավորված հայտատուներին:

7.3.2. Աշխատանքային քննարկումները հրավիրում և վարում է Հանձնաժողովի նախագահը: Աշխատանքային քննարկումների արձանագրությունը պետք է ստորագրվի Հանձնաժողովի՝ քննարկմանը ներկա բոլոր անդամների կողմից: Աշխատանքային քննարկումների արձանագրությունը այն կազմելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում պետք է տրամադրվի Որակավորված հայտատուներին:

7.3.3. Եթե հանձնաժողովի անդամը կամ Որակավորված հայտատուն աշխատանքային քննարկումների վերաբերյալ ցանկանում է արտահայտել արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա այդ կարծիքը ներկայացվում է գրավոր՝ արձանագրությանը ծանոթանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով նախատեսված հատուկ կարծիքը կցվում է աշխատանքային քննարկումների արձանագրությանը:

7.3.4. Հանձնաժողովը Որակավորված հայտատուներին ծանուցում է ուղարկում աշխատանքային քննարկման վերաբերյալ՝ դրա անցկացման օրվանից նվազագույնը 4 օր առաջ:

7.3.5. Աշխատանքային քննարկմանը մասնակցող լիազորված անձինք պետք է ունենան անձը հաստատող բնօրինակ փաստաթղթեր և Լիազորող Փաստաթղթերի պատճենները: Աշխատանքային քննարկմանը մասնակցող Լիազորված Անձինք ստորագրում են Հանձնաժողովի քարտուղարի մոտ առկա գրանցամատյանը՝ փաստարկելով իրենց մասնակցությունը: Այն դեպքում, երբ Լիազորված Անձինք չեն մասնակցում աշխատանքային քննարկմանը, Հանձնաժողովը պետք է շարունակի քննարկումը առանց նրանց և պետք է արտացոլի այդ անձանց բացակայության փաստը արձանագրություններում:

7.3.6. Լիազորված Անձանց բացակայությունը արգելք չէ աշխատանքային քննարկումներն իրականացնելու համար:

7.3.7. Հանձնաժողովը կարող է հստակեցնել աշխատանքային քննարկումների մանրամասները (ինչպիսիք են օրակարգը, խորհրդակցության ընթացակարգը և հանդիպման ժամանակացույցը) ծանուցման մեջ և/կամ այդ հանդիպման բացման ընթացքում:

7.3.8. Հանձնաժողովը աշխատանքային քննարկումների արդյունքում ամփոփած տեղեկությունները, ներառյալ՝ նիստի ընթացքում հնչեցված հարցերի համախմբված պատասխանները, պետք է փոխանցի յուրաքանչյուր Որակավորված հայտատուի (նիստում բարձրացված հարցերին բոլոր պատասխանները պետք է լինեն ապանձնավորված):

7.4. **Առաջարկի Հրավերի հաստատումը և հրապարակումը**

7.4.1. Որակավորված հայտատուների ցանկը հրապարակելուց հետո եռամսյա

ժամկետում Հանձնաժողովը որոշում է կայացնում առաջարկի հարցումը որակավորված հայտատուներին ծանուցելու (որակավորման հայտարարության հետ առաջարկի հարցում հրապարակած լինելու դեպքում) կամ հրապարակելու մասին, կամ առաջարկի հարցումը չծանուցելու կամ չհրապարակելու հիմքով մրցույթը չկայացած հայտարարելու մասին:

7.4.2. Հանձնաժողովը Առաջարկի հարցումը հրապարակում է Վերահսկող և Լիազոր մարմինների կայքերում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական կայքում՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Մրցույթը չկայացած հայտարարելը

8.1.1. Օպերատորի ընտրության մրցույթը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) Որակավորման հայտերից կամ Առաջարկի հարցման փուլի հայտերից ոչ մեկը չի համապատասխանում Որակավորման հարցման կամ Առաջարկի հարցման պայմաններին, կամ չի ներկայացվել Որակավորման հայտ կամ Առաջարկի հարցման փուլի հայտ.

2) որակավորման փուլի ավարտից հետո սահմանված ժամկետում Հանձնաժողովը որակավորված հայտատուներին չի ծանուցում առաջարկի հարցումը.

3) պայմանագիր չի կնքվել:

8.1.2. Մրցույթը չկայացած հայտարարելու հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովը որոշում է կայացնում օպերատորի ընտրության մրցույթը չկայացած հայտարարելու մասին:

8.1.3. Օպերատորի ընտրության մրցույթը չկայացած հայտարարվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը Վերահսկող և Լիազոր մարմինների պաշտոնական կայքերում հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հրապարակում է հայտարարություն, որում նշվում է օպերատորի ընտրության մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

8.2. Ծախսեր

8.2.1. Թեկնածուն պետք է կրի Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ՝ (չսահմանափակվելով միայն) սույն Որակավորման հարցման համաձայն Որակավորման Հայտի հետ կապված հարցումների պատասխանների, Հայտերի պարզաբանման դիմումների պատրաստման հետ կապված բոլոր ծախսերը:

8.2.2. Եթե չբացված Որակավորման Հայտերը Թեկնածուներին վերադարձնելու համար Հանձնաժողովի համար առաջանում է որևէ ծախս, ապա այդ ծախսը պետք է կրի համապատասխան Թեկնածուն:

8.2.3. Սույն Որակավորման հարցման և Կիրառելի Օրենքի համաձայն Որակավորման Հայտի մերժումը, Ընտրության Ընթացակարգի ցանկացած փուլում

Հայտատուի կողմից հայտը հետ վերցնելը, Ընտրության Ընթացակարգի (մրցույթի) չկայացած հայտարարումը չեն կարող հիմք լինել Որակավորման Հայտերի պատրաստման և ներկայացման կամ ցանկացած այլ ծախսի փոխհատուցման համար։

8.3. **Որակավորման Հարցման մեջ փոփոխություններ**

8.3.1. Հանձնաժողովը Որակավորման հարցման մեջ կարող է փոփոխություններ կատարել ոչ ուշ, քան որակավորման հայտերը ներկայացնելու վերջնաժամկետից 5 օրացուցային օր առաջ։ Որակավորման հարցման փոփոխությունները պետք է համապատասխանեն թափանցիկության, հավասարության և խտրականության բացառման սկզբունքներին։

8.3.2. Հանձնաժողովը Որակավորման հարցման մեջ կարող է կատարել էական և ոչ էական փոփոխություններ։ Որակավորման հարցման էական փոփոխությունները ենթադրում են փոփոխություններ, որոնք էապես ազդում են Որակավորման հարցման բնույթի, շրջանակի և պահանջների կամ որակավորման հարցման փուլում Ընտրության ընթացակարգի անցկացման վրա։ Էական փոփոխությունները կարող են ներառել, մասնավորապես.

a) Հավելված 4-ում (*Հայտատուների Ընդհանուր Պահանջներ*) սահմանված՝ Հայտատուների նկատմամբ ընդհանուր պահանջների և/կամ Հավելված 5-ում (*Որակավորման Չափանիշներ*) սահմանված Որակավորման Չափորոշիչների վրա նշանակալիորեն ազդող փոփոխությունները.

b) Թեկնածուների համար մասնակցության հիմնական պահանջների վրա նշանակալիորեն ազդող փոփոխությունները.

c) Հանձնաժողովի կողմից որպես էական սահմանված այլ փոփոխություններ։

8.3.3. Որակավորման հարցման մեջ փոփոխություններ կատարելու դեպքում Հանձնաժողովը կարող է երկարաձգել Որակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետը։ Երկարաձգման ժամկետը Հանձնաժողովը որոշում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով փոփոխության բնույթը։

8.3.4. Հանձնաժողովը Որակավորման հարցման փոփոխությունները փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում հրապարակում է Վերահսկող մարմնի պաշտոնական կայքում։ Փոփոխությունների հրապարակումը պետք է ներառի (i) Որակավորման հարցման նոր (թարմացված) տարբերակը՝ համապատասխան փոփոխություններով, և (ii) Որակավորման հարցման փոփոխությունների ամփոփագիրը՝ առանձին փաստաթղթում։

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Մրցույթի անվանումը	Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրություն
Պատասխանատու մարմնի կոնտակտային տվյալ	Օպերատորի ընտրության մրցույթի անցկացման աշխատանքները կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողով Հասցե՝ Հայաստան, 0015, Երևան Մովսես Խորենացու փող., 3 շենք Վեբ կայք՝ https://www.src.am/am Էլեկտրոնային փոստի հասցե՝ mariana_udumyan@taxservice.am
Հանձնաժողովի կոնտակտային տվյալ	Հեռ. (+374) 10 30 42 91 Էլ. Փոստ mariana_udumyan@taxservice.am
Որակավորման հարցման հետ կապված հաղորդակցության հարցերով իրավասու պաշտոնյաներ	Հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Հակոբյան Հանձնաժողովի քարտուղար՝ Մարիաննա Ուդումյան
Իրավասու մարմնի պաշտոնական կայքում մրցույթի հանրային հասանելի տեղեկատվության հղումը	https://mineconomy.am/page/3464
Որակավորման հարցման լեզուն և հաղորդակցության լեզուն	Հայերեն, անգլերեն կամ ռուսերեն
Որակավորման հայտերի օրինակների քանակը	Որակավորման հայտերը ներկայացվում են միայն առձեռն՝ 4 (չորս) օրինակից, որոնցից՝ 1 (մեկ) բնօրինակ, 1 (մեկ) պատճեն, 2 (երկու) էլեկտրոնային կրիչ (տվյալների պահպանման 2 (երկու) առանձին USB էլեկտրոնային կրիչներով)

Որակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետը	25.11.2025թ., 18:00 (Երևանի ժամանակով), Երևան
Որակավորման հայտերի բացման նիստի օրը, ժամը և վայրը	26.11.2025թ., 16:00 (Երևանի ժամանակով), Երևան
ՀՀ Կառավարության 14.08.2025թ. N 1149-Ն որոշման հղումը	https://www.arlis.am/hy/acts/210694/latest

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

No	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ
1.	Որակավորման հայտարարության և Որակավորման հարցման հրապարակում	16.10.2025թ.
2.	Հայտատուների կողմից պարզաբանումներ տրամադրելու պահանջների ներկայացում Հանձնաժողովին	Որակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետից առավելագույնը 20 օր առաջ
3.	Հանձնաժողովի կողմից Հայտատուներին պարզաբանումների տրամադրում	Հարցումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
4.	Որակավորման հայտերի վերաբերյալ բաց նիստեր	Հանձնաժողովի որոշած օրերին, ինչի մասին նիստից առնվազն չորս օր առաջ կհրապարակվի հայտարարություն
5.	Որակավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետ	25.11.2025թ.
6.	Որակավորման հայտերի բացում	26.11.2025թ.
7.	Որակավորման հայտերի գնահատման վերջնաժամկետ	26.12.2025
8.	Որակավորված հայտատուների ցանկի հրապարակում	Որակավորման հայտերի գնահատման վերջնաժամկետից 5 աշխատանքային օրվա ընթացքում
9.	Գաղտնիության նախաձեռնության ներկայացում	Որակավորված հայտատուների ցանկի հրապարակումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում
10.	Աշխատանքային քննարկումներ	Առաջին քննարկում՝ Որակավորված հայտատուների ցանկի հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում, Հետագա քննարկումներ՝ Հանձնաժողովի որոշմամբ
11.	Առաջարկի հարցման հաստատում և հրապարակում	Որակավորված հայտատուների ցանկի հրապարակումից հետո եռամսյա ժամկետ (Առաջարկի հարցումը Որակավորման հարցման հետ հրապարակված չլինելու դեպքում)

Սույն ժամանակացույցը կողմնորոշիչ բնույթ ունի

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀԱՅՏԱՏՈՒԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ

1. Հայտատուն պարտավոր է Որակավորման հայտով ներկայացնել առաջիկա 3 տարիների համար գործարար ծրագիր, որը ներառում է՝

- ծրագրի իրագործման ընդհանուր նկարագրությունը,
- ընդհանուր տեղեկություններ սպասվող ներդրումների, կապիտալ ծախսերի, տեխնիկական առաջադրանքի, ֆինանսավորման մասին,
- Հայտատուի ցանկությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ ծրագրի իրականացման վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հայտատուն չի կարող որակավորվել, իսկ որակավորված լինելու դեպքում որակազրկվում է, եթե նրան կամ, կոնսորցիումով մասնակցության դեպքում՝ կոնսորցիումի որևէ անդամի Որակավորման հայտի կամ Առաջարկի հարցման փուլի հայտի պատրաստման և ներկայացման հարցերով աջակցություն է ցուցաբերել այնպիսի անձ, որը ցանկացած կերպով ներգրավված է եղել սույն Որակավորման հարցման կամ Առաջարկի հարցման պատրաստման ու կազմման աշխատանքներին:

2. Հայտատուն չի կարող որակավորվել, եթե նա կամ, կոնսորցիումով մասնակցության դեպքում՝ կոնսորցիումի որևէ անդամ փոխկապակցված է մեկ այլ հայտատուի կամ հայտատու կոնսորցիումի որևէ անդամի հետ:

3. Հայտատուն չի կարող որակավորվել, եթե նա կամ, կոնսորցիումով մասնակցության դեպքում՝ կոնսորցիումի որևէ անդամ ունի շահերի բախում ընտրության ընթացակարգում ներգրավված որևէ պետական մարմնի պաշտոնատար անձի հետ, ինչը կարող է հանգեցնել տվյալ հայտատուի կողմից տեղեկատվությունից օգտվելուն, որևէ այլ կերպ առավելություն տալուն կամ ընտրության ընթացակարգի արդյունքների վրա ազդելուն:

4. Օտարերկրյա պետությունը, օտարերկրյա պետության համայնքը, նահանգը կամ հանրային իրավունքի այլ սուբյեկտ չի կարող լինել հայտատու կամ հայտատու կոնսորցիումի անդամ:

5. Հայաստանի Հանրապետությունը կամ Հայաստանի Հանրապետության համայնքը կամ Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ ընկերությունը կամ այն ընկերությունը, որում Հայաստանի Հանրապետությունը կամ Հայաստանի Հանրապետության համայնքը որևէ այլ՝ օրենքով չարգելված ձևով այդ ընկերության որոշումները կանխորոշելու հնարավորություն ունի, չի կարող լինել հայտատու կամ հայտատու կոնսորցիումի անդամ:

6. Հայտատուն չի կարող որակավորվել, եթե նրա ձայնի իրավունքի կամ սեփական բաժնեմասի 50%-ից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է օտարերկրյա պետության կամ օտարերկրյա համայնքի: Եթե հայտատուն կոնսորցիում է, ապա չի կարող որակավորվել, եթե կոնսորցիումի որևէ անդամի ձայնի իրավունքի կամ սեփական բաժնեմասի 50%-ից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է օտարերկրյա պետության կամ օտարերկրյա համայնքի:

7. Հայտատուն չի կարող որակավորվել նաև այն դեպքում, երբ առկա են Օրենքով կամ Ընթացակարգով նախատեսված՝ մասնակցության իրավունքի այլ արգելքներ և սահմանափակումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշներ

Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշներին համապատասխանությունը հավաստելու նպատակով ներկայացման ենթակա փաստաթղթերը թվարկված են Հավելված 6-ում *(Որակավորման Հայտի Բովանդակությունը):*

Թեկնածուն պետք է ցույց տա իր համապատասխանությունը No.1.1 և No.1.2 ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշներին պարտադիր, իսկ No.1.3 և 1.4 ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշների դեպքում՝ դրանցից առնվազն մեկին:

1.1. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.1 — Ֆինանսական առողջություն

Թեկնածուի՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները վերջին երեք (3) ֆինանսական տարիների համար պետք է ցույց տան, որ Թեկնածուն չի գտնվում անվճարունակության գործընթացների մեջ, ինչպես նաև ցույց տան նրա հետագա երկարաժամկետ շահութաբերությունը: Վերջին հաստատված ֆինանսական տարի է համարվում վերջին ֆինանսական տարին կամ վերջինին մոտ ֆինասական տարին (եթե վերջին ֆինանսական տարվա աուդիտի արդյունքները դեռ հասանելի չեն)՝ աուդիտորական հաշվետվությամբ հաստատված:

Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.1-ին բավարարելու համար Թեկնածուի զուտ ակտիվների արժեքը՝ հաշվարկված որպես համախառն ակտիվների և համախառն պարտավորությունների տարբերություն, պետք է լինի դրական:

Հայտատուն No.1.1 ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշը կարող է բավարարել, եթե Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի նվազագույնը 3 (երեք) տարվա գործունեության փորձ:

Եթե Թեկնածուն Կոնսորցիում է, ապա No.1.1 ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշի պահանջներին պետք է համապատասխանեն Կոնսորցիումի՝ առանձին վերցրած բոլոր անդամները:

1.2. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.2 — Սեփական կապիտալ

Թեկնածուն կամ եթե թեկնածուն կոնսորցիում է, Կոնսորցիումի բոլոր անդամները միասին պետք է ունենան առնվազն 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք ՀՀ դրամի (ըստ Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ

կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքի, իսկ այլ արժույթով ներկայացվելու դեպքում համարժեքությունը որոշվում է Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ տվյալ արժույթի նկատմամբ հայկական դրամի պաշտոնական փոխարժեքով) սեփական կապիտալ վերջին հաստատված ֆինանսական տարվա վերջում: Ընդ որում՝ Կոնսորցիումի Առաջատար անդամը պետք է ունենա առնվազն 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք ՀՀ դրամի սեփական կապիտալ, իսկ մնացած անդամները՝ առնվազն 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք ՀՀ դրամի սեփական կապիտալ: Վերջին հաստատված ֆինանսական տարի է համարվում վերջին ֆինանսական տարին կամ վերջինին մոտ ֆինանսական տարին (եթե վերջին ֆինանսական տարվա աուդիտի արդյունքները դեռ հասանելի չեն)՝ աուդիտորական հաշվետվությամբ հաստատված:

1.3. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.3 — Ազատ դրամական հոսքեր

Թեկնածուն, իսկ եթե թեկնածուն կոնսորցիում է, ապա բոլոր անդամները միասին ընդհանուր առմամբ պետք է ունենան առնվազն 3,000,000 ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք ՀՀ դրամի (ըստ Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքի, իսկ այլ արժույթով ներկայացվելու դեպքում համարժեքությունը որոշվում է Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ տվյալ արժույթի նկատմամբ հայկական դրամի պաշտոնական փոխարժեքով) չափով դրամական միջոցների ազատ հոսք վերջին հաստատված ֆինանսական տարվա ընթացքում: Վերջին հաստատված ֆինանսական տարի է համարվում վերջին ֆինանսական տարին կամ վերջինին մոտ ֆինանսական տարին (եթե վերջին ֆինանսական տարվա աուդիտի արդյունքները դեռ հասանելի չեն)՝ աուդիտորական հաշվետվությամբ հաստատված:

Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ 1.3-ի իմաստով «Դրամական միջոցների ազատ հոսք» նշանակում է հասանելի դրամական միջոցներ՝ առանց շրջանառու միջոցներում բոլոր անհրաժեշտ ներդրումների:

1.4. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.4 — Ֆինանսավորման հասանելի աղբյուրների ապացույցներ

Թեկնածուն կամ Կոնսորցիումի բոլոր անդամները ընդհանուր առմամբ պետք է հավաստեն 3,000,000 ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք ՀՀ դրամի (ըստ Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքի, իսկ այլ արժույթով ներկայացվելու դեպքում համարժեքությունը որոշվում է Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ տվյալ արժույթի նկատմամբ հայկական դրամի պաշտոնական փոխարժեքով) ֆինանսավորման ապահովման կարողություն: Այս կարողությունը կարող է դրսևորվել ստորև նշվածներից մեկով կամ երկուսով.

(a) իրացվող ներդրումային միջոցների ապացույցներ, ինչպիսիք են բանկային ավանդները կամ արժեթղթերը՝ առանց որևէ գրավի 3,000,000 ԱՄՆ դոլարի կամ համարժեք դրամի չափով,

(b) բանկ(եր)ի կողմից տրամադրված երաշխիքային նամակ(ներ) (Զև Է), որոնք ցույց են տալիս Թեկնածուին (Կոնսորցիումի բոլոր անդամներին միասին) 3,000,000 (երեք միլիոն) ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք ՀՀ դրամով վարկ տրամադրելու պարտավորություն: Երաշխիքային նամակները պետք է ցույց տան բանկերի պարտավորությունը՝ տրամադրելու համաձայնագրով պահանջվող բոլոր վարկային նամակները և բանկային երաշխիքները:

Վերոնշյալ (b) կետում նշված ֆինանսավորման հասանելի աղբյուրների ապացույցը պետք է տրամադրվի այն բանկերի կողմից, որոնք համապատասխանում են Հավելված 8-ում նշված «Հուսալի բանկերի պահանջներին»:

2. Մասնագիտական կարողությունների չափանիշներ

Թեկնածուն պետք է ցույց տա իր համապատասխանությունը 2.1 կետում նկարագրված մասնագիտական կարողությունների չափանիշին: Մասնագիտական կարողությունների չափանիշին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը թվարկված են Հավելված 6-ում *(Որակավորման հայտի բովանդակություն):*

2.1. Մասնագիտական կարողությունների չափանիշ No. 2.1

Թեկնածուն պետք է ցույց տա, որ ունի հետևյալ ծրագրի իրականացման փորձ՝

ա) խաղային գործունեության ոլորտի ինտերնետ հասանելիության ապահովմամբ կիրառվող տեխնիկածրագրային համակարգի վերջնական նախագծում և ներդրում, որը ապահովում է ինտերնետ շահումով խաղերի կամ բուքմեյքերային գործունեության միջոցով կազմակերպվող խաղի խաղացողների խաղանիշերի, խաղադրույքների, շահումների և խաղային գործունեության ընթացքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվության գրանցում, պահպանում և հաշվառում, վերլուծություն, ռիսկերի գնահատում, զեղծարարության բացահայտում: Թեկնածուն պետք է կարողանա ներկայացնել նման ծրագրային ապահովման գործող օրինակ (որևէ երկրում հայտի ներկայացման պահին կիրառվող):

Մասնագիտական կարողությունների No. 2.1 չափանիշը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1. Թեկնածուն պետք է ապացուցի, որ ունի ա) կետում նշված Հաշվետու ծրագրի իրականացման փորձ: Եթե թեկնածուն ընդգրկված է եղել այնպիսի կոնսորցիումի կազմում,

որն իրականացրել է ա) կետում նշված Հաշվետու ծրագիրը, ապա պետք է այդ կոնսորցիումին մասնակցած լինի որպես առաջատար անդամ:

2. ա) կետում նշված Հաշվետու ծրագիրը պետք է ավարտված լինի հայտարարության հրապարակման ամսաթվից առաջ վերջին հինգ (5) տարիների ընթացքում:

3. ա) կետում նշված Հաշվետու ծրագիրը չպետք է ներառի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ապացուցված դեպքեր: «Չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ապացուցված դեպք» ասելով հասկացվում է հետևյալը՝

i. Վերջնական և ուժի մեջ մտած դատարանի որոշումներ, որոնք դադարեցրել են համապատասխան Հաշվետու ծրագիրը՝ չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառով,

ii. Ֆինանսական տույժերի կիրառում՝ Հաշվետու ծրագրի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառով,

iii. Համապատասխան Հաշվետու ծրագրի վաղաժամ դադարեցում՝ դրա պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառով:

4.Հայտատուն պետք է ունենա ISO/IEC 27001:2022 միջազգային ստանդարտի հավաստագիր:

5. ա) կետում նշված Հաշվետու ծրագրի՝ հաջող իրականացված լինելու և որակավորման հայտը ներկայացնելու պահի դրությամբ կիրառության մեջ լինելու վերաբերյալ այդ ծրագրերի պատվիրատուների կողմից տրվել է երաշխավորագիր:

Կոնսորցիումով մասնակցության դեպքում մասնագիտական կարողության՝ վերը նշված չափանիշները կարող են բավարարվել կոնսորցիումի բոլոր անդամների միասնական որակավորումներով:

3. Աշխատանքային ռեսուրսների չափանիշ

Օպերատորի գործունեության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է պրոֆեսիոնալ թիմ, որն իր գործունեությունը իրականացնում է թափանցիկության և հաշվետվողականության հիման վրա՝ նպաստելով խաղացողների իրավունքների պաշտպանությանը, միջազգային չափորոշիչներին խաղային ոլորտի համապատասխանությանը և վերահսկողության բարձրացմանը:

Կոնսորցիումով մասնակցության դեպքում աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները կարող են բավարարվել կոնսորցիումի բոլոր անդամների կողմից համատեղ:

Հայտատուն պարտավոր է ներկայացնել նոր ստեղծվելիք օպերատոր ընկերության համար նախատեսվող նախագծային թիմի հիմական կազմը՝ առնվազն յոթ (7) հիմական մասնագետների ինքնակենսագրականները.

1. Գլխավոր տնօրեն – խոշոր տեղեկատվական համակարգերի ներդրման առնվազն 10 տարվա փորձ, ներառյալ խաղային ոլորտի վերահսկողության կամ գործարքների մոնիթորինգի ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրման հաջողված փորձ:

2. Տեղեկատվական համակարգերի ճարտարապետ – առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ՝ գործարքային տվյալների բազաների և իրական ժամանակում մոնիթորինգի համակարգերի ոլորտում:

3. Խաղային համապատասխանության մասնագետ – առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ՝ խաղային ոլորտը կարգավորող մարմինների հետ:

4. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (ՓԼԱՖ) մասնագետ – Financial Action Task Force (FATF) չափանիշներին համապատասխան համակարգերի ներդրման փորձով:

5. Կիբերանվտանգության ղեկավար – առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում:

6. Տվյալների պաշտպանության մասնագետ – առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ՝ General Data Protections Rules (GDPR) կամ համարժեք անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության իմացությամբ:

7. Որակի ապահովման և հավաստագրման մասնագետ – առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ՝ Gaming Labs International (GLI) կամ համարժեք միջազգային փորձարկման և հավաստագրման գործընթացների իմացությամբ:

Յուրաքանչյուր մասնագետի համար պետք է ներկայացվեն ինքնակենսագրականներ (CV)՝ մասնագիտական փորձի նկարագրությամբ: Բոլոր մասնագետների համար պետք է ներկայացվի առնվազն մեկ համապատասխան նախագծի ներդրման մասնակցության փորձ:

Պայմանագրի կնքման պահին Օպերատոր ընկերության վերը 1-7 կետերում նշված պաշտոնները պետք է զբաղեցնեն հենց այն անձինք, որոնց ինքնակենսագրականները ներկայացվել են: Եթե Պայմանագրի կնքման պահին այդ անձինք չեն զբաղեցնում նշված պաշտոնները, ապա այդ պաշտոնները պետք է զբաղեցվեն համարժեք տվյալներ ունեցող մասնագետների կողմից:

4. Տեխնիկական միջոցների չափանիշ

Հայտատուն պետք է ապահովի Օպերատորի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ: Հայտատուն պարտավոր է ապահովել բոլոր այն տեխնիկական միջոցները, որոնք պահանջվում են Առաջարկի հարցման փուլում նրա ներկայացրած տեխնիկական առաջարկի իրագործման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Որակավորման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը՝ ներկայացված առանձին մասերով՝ հետևյալ կերպ.

ՄԱՍ	ՆԿԱՐԱԳԻՐ
Մաս I	Որակավորման հայտի ձևը և սույն հավելվածով պահանջվող՝ Հայտատուներին ներկայացվող

	ընդհանուր պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր
Մաս II	Սույն հավելվածով պահանջվող՝ Հայտատուներին ներկայացվող որակավորման չափանիշներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր

Եթե սույն Հավելված 6-ում այլ բան նախատեսված չէ, որակավորման հայտերը պետք է պատրաստվեն և ձևակերպվեն հետևյալ պահանջներին համապատասխան.

(a) Որակավորման հայտը կազմող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն «A4» կամ «Letter» չափերի:

(b) օտար լեզվով (բացի Պաշտոնական Լեզուներից) փաստաթղթերը, որոնք ներկայացված են որպես որակավորման հայտի մաս, պետք է պատշաճ թարգմանված լինեն որևէ Պաշտոնական Լեզվով:

1. Մաս I — Որակավորման հայտի ձևը և փաստաթղթերը, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին

Որակավորման հայտի Մաս I-ում յուրաքանչյուր Թեկնածու պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերը (ըստ վերաբերելիության)՝

1.1. Ռեզիդենտ իրավաբանական անձինք

(a) Որակավորման հայտ որևէ Պաշտոնական Լեզվով սույն Հավելված 6-ով սահմանված ձևով (ձև Ա).

(b) լիազորող փաստաթղթեր որևէ Պաշտոնական Լեզվով և նույնականացման փաստաթղթեր.

- գրավոր լիազորագիր, որը համապատասխանում է սույն Հավելված 6-ի «Բ» ձևով սահմանված լիազորագրի բովանդակությանը ներկայացվող պահանջներին (Լիազորագրի բովանդակության պահանջները): Լիազորագրում պետք է նշվեն Լիազորված անձի լիազորությունները՝ ստորագրելու Որակավորման հայտը և ներկայացնելու Հայտատուին կամ

- այլ փաստաթղթեր (օրինակ՝ տնօրենների խորհրդի որոշումներ, կառավարման մարմինների այլ համարժեք որոշումներ), որոնք հստակորեն հաստատում են Լիազորված անձի (անձանց) լիազորությունը՝ ներկայացնելու Հայտատուին և սահմանում են առնվազն նույն լիազորությունների շրջանակը, ինչ նշված է Ձև Բ-ում.

- Լիազորված անձանց անձը հաստատող փաստաթուղթ.

(c) հիմնական տեղեկություններ Թեկնածուի մասին որևէ Պաշտոնական Լեզվով՝ համաձայն սույն Հավելված 6-ի Ձև Գ-ի, ներառյալ՝ որակավորման հայտը

ներկայացնելու օրվան նախորդող 3 տարիների ընթացքում գործադիր մարմինների անդամների, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի, մասնակիցների, իրական շահառուների և իր հետ փոխկապակցված անձանց ցանկը և Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իր բաժնեմասնակցության կառուցվածքը.

(d) որևէ Պաշտոնական լեզվով կանոնադրությունը կամ հիմնադիր այլ փաստաթուղթ՝ ներառյալ բոլոր փոփոխությունները.

(e) առավելագույնը մեկամսյա վաղեմության քաղվածք՝ տրված Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից.

(f) գրավոր հավաստում (Զև Դ) առ այն, որ

– Կիրառելի օրենքով նախատեսված մասնակցության արգելքները բացակայում են,

– Թեկնածուն համապատասխանում է Որակավորման հարցման Հավելված 4-ով նախատեսված՝ Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին,

– Թեկնածուն պատասխանատվություն է կրում Ընտրության Ընթացակարգում սխալ կամ կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ և տվյալներ ներկայացնելու, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին Հանձնաժողովին չտեղեկացնելու համար,

– հավաստում՝ որակավորման փուլը հաղթահարելու դեպքում առաջարկի հարցմամբ սահմանված հայտի ապահովում ներկայացնելու պարտավորություն ունենալու մասին.

- հավաստում հաղթող ճանաչվելու դեպքում Կիրառելի օրենքի համաձայն առևտրային կազմակերպություն (Օպերատոր) ստեղծելու և այն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ներկայացնելու պարտավորություն ունենալու մասին, որը ՀՀ կառավարության որոշմամբ օպերատոր սահմանվելուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում պետք է համապատասխանի Կիրառելի օրենքով և պայմանագրով Օպերատորին ներկայացվող պահանջներին,

- հավաստում փոխկապակցված անձի միաժամանակյա մասնակցության դեպքի բացակայության վերաբերյալ,

- հայտարարություն՝ Օպերատորի ընտրության ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

(g) հայտատուի հիմնադիրների, ինչպես նաև բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների և իրական շահառուների՝ օրենքով նախատեսված համաձայնությունները, այդ թվում՝ իրենց վերաբերյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով տեղեկություններ ձեռք բերելու մասով, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունների կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքներին ծանոթանալու մասով, ինչպես նաև նշված անձանց հավաստիացումը՝ Հանձնաժողովի պահանջով անձամբ ներկայացնել նման ուսումնասիրությունների արդյունքները (Զև Ե)։

1.2. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք

(a) Որակավորման հայտ որևէ Պաշտոնական Լեզվով սույն Հավելված 6-ով սահմանված ձևով (Ձև Ա).

(b) Լիազորող փաստաթղթեր և ինքնությունը հաստատող փաստաթղթեր որևէ Պաշտոնական Լեզվով.

- նոտարի կամ հայտատուի գրանցման երկրի իրավասու այլ մարմնի կողմից վավերացված լիազորագիր, որը ներկայացվում է ապոստիլով վավերացված ձևով «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիան վավերացրած երկրներից ուղարկված փաստաթղթերի դեպքում, իսկ եթե պետությունը կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը կատարվում է հյուպատոսական ճանապարհով: Լիազորագիրը պետք է բավարարի «Բ» ձևով սահմանված լիազորագրի բովանդակության պահանջները: Լիազորագրում պետք է նշվեն Լիազորված անձի լիազորությունները՝ ստորագրելու Որակավորման հայտը և ներկայացնելու Հայտատուին կամ

- այլ փաստաթղթեր (օրինակ՝ տնօրենների խորհրդի որոշումներ, կառավարող մարմինների այլ համարժեք փաստաթղթեր), որոնք հստակորեն հաստատում են Հայտատուին ներկայացնելու՝ Լիազորված անձի լիազորությունը: Այդ փաստաթուղթը պետք է պարունակի առնվազն նույն լիազորությունների շրջանակը, ինչ նշված է Ձև Բ-ում.

- Լիազորված Անձանց ինքնությունը հաստատող փաստաթղթեր:

օտար լեզվով (Պաշտոնական Լեզուներից բացի) պատրաստված (թողարկված) Լիազորող Փաստաթղթերը և ինքնությունը հաստատող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Պաշտոնական Լեզուներից որևէ մեկով դրանց պատշաճ թարգմանությամբ.

(c) հիմնական տեղեկություններ Թեկնածուի մասին որևէ Պաշտոնական Լեզվով՝ համաձայն սույն Հավելված 6-ի Ձև Գ-ի, ներառյալ՝ որակավորման հայտը ներկայացնելու օրվան նախորդող 3 տարիների ընթացքում գործադիր մարմինների անդամների, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի, մասնակիցների, իրական շահառուների և իր հետ փոխկապակցված անձանց ցանկը և Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իր բաժնեմասնակցության կառուցվածքը.

(d) որևէ Պաշտոնական Լեզվով կանոնադրությունը կամ հիմնադիր այլ փաստաթղթերը, ներառյալ՝ բոլոր փոփոխությունները.

(e) առավելագույնը մեկամսյա վաղեմության տեղեկանք (քաղվածք)՝ տրված ոչ ռեզիդենտ հայտատուի գրանցման երկրի իրավասու պետական մարմնի կողմից, որը ներկայացվում է ապոստիլով վավերացված ձևով «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» 1961 թվականի

հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիան վավերացրած երկրներից ուղարկված փաստաթղթերի դեպքում, իսկ եթե պետությունը կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը կատարվում է հյուպատոսական ճանապարհով.

(f) որևէ Պաշտոնական Լեզվով գրավոր հավաստում (Ձև Դ) առ այն, որ

– Կիրառելի օրենքով նախատեսված մասնակցության արգելքները բացակայում են,

– Թեկնածուն համապատասխանում է Որակավորման հարցման Հավելված 4-ով նախատեսված՝ Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին,

– Թեկնածուն պատասխանատվություն է կրում Ընտրության Ընթացակարգում սխալ կամ կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ և տվյալներ ներկայացնելու, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին Հանձնաժողովին չտեղեկացնելու համար,

– հավաստում՝ որակավորման փուլը հաղթահարելու դեպքում առաջարկի հարցմամբ սահմանված հայտի ապահովում ներկայացնելու պարտավորություն ունենալու մասին.

- հավաստում հաղթող ճանաչվելու դեպքում Կիրառելի օրենքի համաձայն առևտրային կազմակերպություն (Օպերատոր) ստեղծելու և այն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ներկայացնելու պարտավորություն ունենալու մասին, որը ՀՀ կառավարության որոշմամբ օպերատոր սահմանվելուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում պետք է համապատասխանի Կիրառելի օրենքով և պայմանագրով Օպերատորին ներկայացվող պահանջներին,

- հավաստում փոխկապակցված անձի միաժամանակյա մասնակցության դեպքի բացակայության վերաբերյալ,

- հայտարարություն՝ Օպերատորի ընտրության ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

(g) հայտատուի հիմնադիրների, ինչպես նաև բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների և իրական շահառուների՝ օրենքով նախատեսված համաձայնությունները, այդ թվում՝ իրենց վերաբերյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով տեղեկություններ ձեռք բերելու մասով, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունների կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքներին ծանոթանալու մասով, ինչպես նաև նշված անձանց հավաստիացումը՝ Հանձնաժողովի պահանջով անձամբ ներկայացնել նման ուսումնասիրությունների արդյունքները (Ձև Ե)։

1.3. Կոնսորցիումներ

(a) Կոնսորցիումի առաջատար անդամի կողմից ներկայացված Որակավորման հայտ որևէ Պաշտոնական Լեզվով սույն Հավելված 6-ով սահմանված ձևով (Ձև Ա).

(b) Կոնսորցիումի անունից գործող անձի Լիազորող փաստաթղթեր և անձը հաստատող փաստաթղթեր որևէ Պաշտոնական Լեզվով.

- լիազորագիր, որը բավարարում է «Բ» ձևով սահմանված լիազորագրի

բովանդակության պահանջները։ Լիազորագրում պետք է նշվեն Լիազորված անձի լիազորությունները՝ ստորագրելու Որակավորման հայտը և ներկայացնելու Հայտատուին կամ

- այլ փաստաթղթեր (օրինակ՝ տնօրենների խորհրդի որոշումներ, կառավարող մարմինների այլ համարժեք փաստաթղթեր), որոնք հստակորեն հաստատում են Հայտատուին ներկայացնելու՝ Լիազորված անձի լիազորությունը։ Այդ փաստաթուղթը պետք է պարունակի առնվազն նույն լիազորությունների շրջանակը, ինչ նշված է Չև Բ-ում.

- Լիազորված Անձանց ինքնությունը հաստատող փաստաթղթեր.

(c) Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի մասին հիմնական տեղեկությունները որևէ Պաշտոնական Լեզվով՝ համաձայն սույն Հավելված 6-ի Չև Գ-ի, ներառյալ՝ որակավորման հայտը ներկայացնելու օրվան նախորդող 3 տարիների ընթացքում Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի գործադիր մարմինների անդամների, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի, մասնակիցների, իրական շահառուների և փոխկապակցված անձանց ցանկը և Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի բաժնեմասնակցության կառուցվածքը.

(d) Կոնսորցիումի բոլոր անդամների՝ որևէ Պաշտոնական Լեզվով կանոնադրությունը կամ հիմնադիր այլ փաստաթղթերը, ներառյալ՝ բոլոր փոփոխությունները.

(e) առավելագույնը մեկամսյա վաղեմության տեղեկանք (քաղվածք)՝ տրված Կոնսորցիումի բոլոր անդամների վերաբերյալ.

(f) Որևէ Պաշտոնական Լեզվով Կոնսորցիումի վերաբերյալ պայմանագիրը՝ հետևյալ դրույթների պարունակմամբ.

– Առաջատար Անդամի և Առաջատար Անդամի իրավասության մասին նշում՝ Ընտրության Ընթացակարգի հետ կապված բոլոր հարցերում անվիճարկելիորեն ներկայացնելու Կոնսորցիումի բոլոր Անդամներին, ներառյալ՝ Կոնսորցիումի անունից Որակավորման Հայտ ներկայացնելը,

– ապագա Ընկերությունում Կոնսորցիումի յուրաքանչյուր Անդամի բաժնեմասը՝ սույն Որակավորման հարցմամբ սահմանված պահանջների պահպանմամբ,

– բաժնետիրության հիմնական պայմանները (հավաստված իրավունքներ, արտոնությունների և սահմանափակումներ), որոնք ենթակա չեն փոփոխման Պայմանգրի կնքման պահի դրությամբ (եթե Կոնսորցիումը ճանաչվի Ընտրության Ընթացակարգի հաղթող)։

(g) Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի հավաստում հետևյալի վերաբերյալ՝

– Կիրառելի օրենքով նախատեսված մասնակցության արգելքները բացակայում են,

– Թեկնածուն համապատասխանում է Որակավորման հարցման Հավելված 4-ով նախատեսված՝ Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին,

– Թեկնածուն պատասխանատվություն է կրում Ընտրության Ընթացակարգում սխալ կամ կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ և տվյալներ ներկայացնելու, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին Հանձնաժողովին չտեղեկացնելու համար,

– հավաստում՝ որակավորման փուլը հաղթահարելու դեպքում առաջարկի հարցմամբ սահմանված հայտի ապահովում ներկայացնելու պարտավորություն ունենալու մասին.

- հավաստում հաղթող ճանաչվելու դեպքում Կիրառելի օրենքի համաձայն առևտրային կազմակերպություն (Օպերատոր) ստեղծելու և այն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ներկայացնելու պարտավորություն ունենալու մասին, որը ՀՀ կառավարության որոշմամբ օպերատոր սահմանվելուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում պետք է համապատասխանի Կիրառելի օրենքով և պայմանագրով Օպերատորին ներկայացվող պահանջներին,

- հավաստում փոխկապակցված անձի միաժամանակյա մասնակցության դեպքի բացակայության վերաբերյալ,

- հայտարարություն՝ Օպերատորի ընտրության ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

(h) Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի հիմնադիրների, ինչպես նաև բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների և իրական շահառուների՝ օրենքով նախատեսված համաձայնությունները, այդ թվում՝ իրենց վերաբերյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով տեղեկություններ ձեռք բերելու մասով, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունների կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքներին ծանոթանալու մասով, ինչպես նաև նշված անձանց հավաստիացումը՝ Հանձնաժողովի պահանջով անձամբ ներկայացնել նման ուսումնասիրությունների արդյունքները (Զև Ե)։

2. Մաս II — Փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը որակավորման չափանիշներին

Որակավորման հայտի Մաս II-ում յուրաքանչյուր թեկնածու պետք է ներկայացնի ստորև թվարկված փաստաթղթերը որևէ Պաշտոնական լեզվով:

2.1. Ֆինանսական և տնտեսական կարողությունների չափանիշներին համապատասխանության ապացույցներ

2.1.1. «Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.1 – Ֆինանսական առողջություն» համապատասխանության ապացույց.

(a) Թեկնածուի՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները վերջին հաստատված երեք (3) ֆինանսական տարիների համար՝ ազգային կամ միջազգային հաշվապահական ստանդարտներին համապատասխան (ներառյալ՝ IFRS, IAS կամ US GAAP),

(b) Թեկնածուի կրեդիտորական և դեբիտորական պարտքերի դասակարգումը՝ ըստ տեսակների և ամսաթվերի՝ ստորագրված Լիազորված Անձի կողմից:

2.1.2. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ թիվ 1.2-ին (սեփական կապիտալ) համապատասխանության ապացույց.

(a) Թեկնածուի՝ աուդիտի ենթարկված վերջին երեք (3) տարիների ֆինանսական հաշվետվությունները՝ ստորագրված Աուդիտորական Ընկերության (կամ Աուդիտորական Ընկերությունների) կողմից ազգային կամ միջազգային հաշվապահական ստանդարտներով (ներառյալ ՖՀՄՍ, ՀՀՄՍ կամ ԱՄՆ GAAP),

(b) աուդիտորական ընկերության (կամ Աուդիտորական Ընկերությունների) կողմից սույն Հավելված 6-ի ձև Ը-ի համաձայն տրված հավաստում՝ նույն ձևում սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Եթե Թեկնածուն Կոնսորցիում է և ապավինում է Կոնսորցիումի Անդամներին Հավելված 5-ի (Որակավորման Պահանջներ) բաժին 1-ում սահմանված No. 1.2 չափանիշին համապատասխանելու համար, ապա Թեկնածուն վերը (a)-(b) կետերում նշված փաստաթղթերը պետք է ներկայացնի Կոնսորցիումի բոլոր Անդամների համար:

2.1.3. Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ թիվ 1.3-ին (ազատ դրամական միջոցներ) համապատասխանության ապացույց.

(a) Թեկնածուի՝ աուդիտի ենթարկված վերջին երեք (3) տարիների ֆինանսական հաշվետվությունները՝ ստորագրված Աուդիտորական Ընկերության (կամ Աուդիտորական Ընկերությունների) կողմից ազգային կամ միջազգային հաշվապահական ստանդարտներով (ներառյալ ՖՀՄՍ, ՀՀՄՍ կամ ԱՄՆ GAAP),

(b) աուդիտորական ընկերության (կամ Աուդիտորական Ընկերությունների) կողմից սույն Հավելված 6-ի ձև Ը-ի համաձայն տրված հավաստում՝ նույն ձևում սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Եթե Թեկնածուն Կոնսորցիում է և ապավինում է Կոնսորցիումի Անդամներին Հավելված 5-ի (Որակավորման Պահանջներ) բաժին 1-ում սահմանված No. 1.3 չափանիշին համապատասխանելու համար, ապա Թեկնածուն վերը (a)-(b) կետերում նշված փաստաթղթերը պետք է ներկայացնի Կոնսորցիումի բոլոր անդամների համար:

2.1.4 «Ֆինանսական և տնտեսական կարողության չափանիշ No.1.4 – Ֆինանսավորման հասանելի աղբյուրների ապացույցներ» համապատասխանության ապացույց.

(a) իրացվելի ներդրվող միջոցների (կանխիկ, արժեթղթեր) ապացույցները հաստատելու համար՝ բանկային քաղվածք(ներ) կամ արժեթղթերի վկայագիր(ներ) կամ այլ նմանատիպ փաստաթուղթ՝ համաձայն Որակավորման հարցման Հավելված 5-ի 1.4

կետի (a) ենթակետի կամ

(b) բանկերի կողմից տրամադրված երաշխիքային նամակներ՝ համաձայն Որակավորման հարցման Հավելված 5-ի 1.4 կետի (b) ենթակետի:

Եթե Թեկնածուն Կոնսորցիում է և ապավինում է Կոնսորցիումի Անդամներին Հավելված 5-ի (Որակավորման Պահանջներ) բաժին 1-ում սահմանված No. 1.4 ֆինանսական չափանիշներին համապատասխանելու համար, Թեկնածուն վերը (a)-(b) կետերում նշված փաստաթղթերը պետք է ներկայացնի Կոնսորցիումի բոլոր անդամների համար

Վերոնշյալ (b) կետով նախատեսված ֆինանսավորման առկա աղբյուրների մասին ապացույցները պետք է տրամադրվեն՝ համաձայն Հավելված 8-ի (Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ):

2.2. Մասնագիտական փորձի համապատասխանության ապացույցներ

Հավելված 5-ով սահմանված մասնագիտական փորձառության պահանջներին համապատասխանությունը հավաստելու համար Թեկնածուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

(a) Պաշտոնական լեզվով սույն Հավելված 5-ի Զև Զ-ով (Մասնագիտական կարողությունների չափանիշներին համապատասխանության հաստատման փորձի աղյուսակ) սահմանված աղյուսակը, որը ստորագրված է լիազորված անձի կողմից և ուղեկցվում է ազատ ոճով շարադրված ուղեկցող Պաշտոնական Լեզվով նամակով,

(b) Հավելված 5-ի 2-րդ բաժնի 2.1-ին կետով սահմանված պահանջներին համապատասխանող և վերջին 5 տարվա ընթացքում ավարտված պայմանագրի օրինակը,

(c) Հավելված 5-ի 2-րդ բաժնի 2.1-ին կետի ա) ենթակետում նշված Հաշվետու ծրագրերը հաջողությամբ իրականացված լինելու և որակավորման հայտը ներկայացնելու պահի դրությամբ կիրառության մեջ լինելու վերաբերյալ այդ ծրագրերի պատվիրատուների կողմից տրված երաշխավորագրեր:

Եթե Թեկնածուն Կոնսորցիում է և Հավելված 5-ի (Որակավորման Չափանիշներ) Բաժին 2-ի 2.1 կետում հաստատված մասնագիտական փորձառության պահանջները բավարարելու համար ապավինում է Կոնսորցիումի Անդամների վրա, Թեկնածուն պետք է լրացուցիչ ներկայացնի վերը նշված (a)–(c) դրույթներով մատնանշված փաստաթղթերը Կոնսորցիումի յուրաքանյուր Անդամի համար:

Վերը նշված պայմանագրերը, եթե գաղտնիության պահանջներից ելնելով չեն կարող ամբողջությամբ բացահայտվել, պետք է տրամադրվեն այն բովանդակությամբ (համարժեք քաղվածքներ / մասեր), ինչը բավարար կլինի մասնագիտական փորձառության պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար:

2.3. Աշխատանքային ռեսուրսներ

Աշխատանքային ռեսուրսների չափանիշին համապատասխանությունը հավաստելու համար Թեկնածուն պետք է ներկայացնի Որակավորման հարցման Հավելված 5-ի 3-րդ բաժնում նշված ստորաբաժանումների պաշտոններում նշանակման ենթակա անձանց՝ ներկայացնելով վերջիններիս ինքնակենսագրությունը: Ինքնակենսագրությունը պետք է պարունակի ներկայացվող մասնագետի գրավոր համաձայնությունը՝ իրեն ներգրավելու վերաբերյալ, որը պետք է հաստատված լինի մասնագետի ստորագրությամբ:

2.4. Տեխնիկական միջոցներ

Թեկնածուն պետք է իր հայտով ներկայացնի հավաստում առ այն, որ կապահովի Առաջարկի հարցման փուլում իր ներկայացրած առաջարկի իրագործման համար անհրաժեշտ բոլոր տեխնիկական միջոցները: Այս հավաստումը տրվում է հայտատուի կողմից ազատ ոճով կազմված գրությամբ:

ՁԵՎ Ա. Որակավորման հայտի ձև

_____ 2025թ.

(Ամիս / ամսաթիվ)

Առարկան	Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի որակավորման հայտ
Ում	Ընտրության ընթացակարգն իրականացնող հանձնաժողով

[**Թեկնածուի անվանումը, գրանցման տվյալները**] սույնով ներկայացնում է իր Որակավորման հայտը՝ համաձայն Որակավորման հարցման՝ մասնակցելու խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգին:

[**Կոնսորցիումի դեպքում՝ Կոնսորցիումի բոլոր անդամների անվանումները, գրանցման տվյալները, ինչպես նաև Առաջատար անդամը**] ի դեմս Կոնսորցիումի առաջատար անդամ _____ -ի, սույնով ներկայացնում է սույն որակավորման հայտը՝ համաձայն Որակավորման հարցման՝ մասնակցելու խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգին:

[**Հատուկ նշանակության գործիքի դեպքում՝ Թեկնածուի անվանումը, գրանցման**

տվյալները] սույնով ներկայացնում է սույն որակավորման հայտը՝ համաձայն Որակավորման հարցման՝ մասնակցելու խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգին։

[**Թեկնածուի անվանումը**] սույնով.

(a) հաստատում է, որ պարտավոր է հետևել բոլոր օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և այլ կանոնների, որոնք կարգավորում են Ընտրության ընթացակարգը.

(b) ընդունում է, որ Հանձնաժողովն իրավունք ունի (i) պահանջել լրացուցիչ տեղեկություն, որը ողջամտորեն պահանջվում է որակավորման հայտը գնահատելու համար, (ii) փոփոխել կամ պարզաբանել կիրառելի ընթացակարգերն ու կանոնները, (iii) մերժել որակավորման հայտը։

[**Թեկնածուի անվանումը**] սույնով ներկայացնում և երաշխավորում է, որ սույն որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սույն որակավորման հայտում ներկայացված ամբողջ տեղեկությունը, ներառյալ՝ կից ձևաթղթերն ու փաստաթղթերը, ճիշտ են և չեն փոփոխվի Ընտրության ընթացակարգի ընթացքում՝ մինչև Պայմանագրի կնքումը (եթե Թեկնածուն ճանաչվում է հաղթող)։

Սույն որակավորման հայտին կցվում են հետևյալ փաստաթղթերը.

(c) լիազորագիր (ձև Բ-ի պահանջների համաձայն) կամ այլ լիազորող փաստաթղթեր,

(d) հիմնական տեղեկատվության ձևը (Ձև Գ)՝ ներառյալ որակավորման հայտը ներկայացնելու օրվան նախորդող 3 տարիների ընթացքում գործադիր մարմինների անդամների, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի, մասնակիցների, իրական շահառուների և իր հետ փոխկապակցված անձանց ցանկը և Որակավորման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իր բաժնեմասնակցության կառուցվածքը,

(e) փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը Հավելված 4-ով թեկնածուներին ներկայացվող ընդհանուր պահանջներին,

(f) փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը Հավելված 5-ով նախատեսված որակավորման չափանիշներին,

(g) հավաստումների ձևը (Ձև Դ),

(h) համաձայնությունների և հավաստիացման ձևը (Ձև Ե)

(i) Կոնսորցիումի դեպքում՝ Կոնսորցիումի համաձայնագիրը՝ բնօրինակի կամ նոտարական վավերացմամբ պատճենի տեսքով և (նվազագույնը) հետևյալ դրույթների պարունակմամբ.

– Առաջատար Անդամի և Առաջատար Անդամի իրավասության մասին նշում՝ Ընտրության Ընթացակարգի հետ կապված բոլոր հարցերում անվիճարկելիորեն ներկայացնելու Կոնսորցիումի բոլոր Անդամներին, ներառյալ՝ Կոնսորցիումի անունից

Որակավորման Հայտ ներկայացնելը,

– ապագա Ընկերությունում յուրաքանչյուր Կոնսորցիումի Անդամի բաժնեմասը՝ սույն Որակավորման հարցմամբ սահմանված պահանջների պահպանմամբ,

– բաժնետիրության հիմնական պայմանները (հավաստված իրավունքներ, արտոնությունների և սահմանափակումներ), որոնք ենթակա չեն փոփոխման Պայմանգրի կնքման պահի դրությամբ (եթե Կոնսորցիումը ճանաչվի Ընտրության Ընթացակարգի հաղթող)։

[**Թեկնածուի անվանումը**] հիմնական ներկայացուցիչն է_____ -ը, ով լիազորված է ստանալու և վարելու Ընտրության ընթացակարգի ընթացքում ողջ նամակագրությունն ու հաղորդակցությունը։ Հիմնական ներկայացուցչի կոնտակտային տվյալները հետևյալն են՝

հեռախոսը, ֆաքսիմիլային համարները և էլ. փոստի հասցեն՝ _____,___

Լիազորված անձանց ամբողջական ցանկը և կոնտակտային տվյալները ներկայացված են Զև Գ-ում (Հիմնական տեղեկատվության ձև)։

[**Ստորագրություն**]

ՁԵՎ Բ. Լիազորագրի բովանդակության պահանջները

Եթե լիազորված անձինք ներկայացնում են Հայտատուին լիազորագրի հիման վրա, ապա վերջինս պետք է պարունակի.

1. տեղեկություններ Լիազորված անձանց մասին, մասնավորապես.

1.1. լրիվ անունը,

1.2. պաշտոնը և աշխատավայրի անվանումը,

1.3. քաղաքացիությունը,

1.4. անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի մանրամասները (սերիան և համարը, ում կողմից է տրված և տրման ամսաթիվը),

1.5. բնակության հասցե,

1.6. հեռախոսահամար (բջջային կամ աշխատանքային),

2. Դիմողի լրիվ անվանումը, որի շահերը ներկայացնում է լիազորված անձը:

3. Լիազորագրով լիազորված անձանց տրված լիազորությունների շրջանակը, որը ներառում է առնվազն՝

3.1. Հայտատուի շահերի ներկայացում Լիազոր և Վերահսկող մարմիններում, Հանձնաժողովում և նրանց պաշտոնատար անձանց առջև,

3.2. Ընտրության ընթացակարգի հետ կապված ցանկացած փաստաթղթի ներկայացում՝ ներառյալ Որակավորման հայտը և Գաղտնիության նախաձեռնությունը,

3.3. Լիազոր և Վերահսկող մարմինների, Հանձնաժողովի, նրանց պաշտոնատար անձանց հետ թեկնածուի մասնակցության համար անհրաժեշտ նամակագրության և այլ հաղորդակցության վարում, այդ թվում՝ պարզաբանումների և փաստաթղթերի տրամադրում և ստացում:

4. Նշում, որ Հայտատուն կրում է Լիազորված անձի կողմից ոչ ճշգրիտ տեղեկության և/կամ փաստաթղթերի տրամադրման պատասխանատվությունը:

Լիազորագրի օրինակելի ձևը ներկայացված է ստորև: Այս օրինակելի ձևը պարտադիր չէ, սակայն հայտատուի լիազորագիրը պետք է համապատասխանի վերը նշված «Բ» ձևով սահմանված լիազորագրի բովանդակության պահանջներին:

Լիազորագրի նմուշ

_____ (օր/ամիս/տարի) (տրման վայր) _____

Ներքոստորագրյալ:

Պրն/Տկն [Հայտատուի անունից առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձի անունը]

Ազգությունը [.....]

Անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալներ [սերիա, համար, տրամադրող մարմին և տրման ամսաթիվ]

Բնակության հասցե [.....]

այսուհետ՝ Լիազորող,

Սույնով

Լիազորում է

Պրն/Տկն [Ներկայացուցչի լրիվ անունը, պաշտոնը, աշխատանքի վայրը, քաղաքացիությունը, անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթի սերիան և համարը, թողարկողը և թողարկման ամսաթիվը, բնակության հասցեն, հեռախոսահամարը] [անվանել բոլոր մյուս ներկայացուցիչներին՝ ըստ անհրաժեշտության]

հանդես գալու որպես [Դիմողի անունը] լիազորված անձ (այսուհետ՝ «Լիազորված անձ(ինք)»)՝

(a) ներկայացնել Հայտատուի շահերը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում, այլ իրավասու մարմիններում, Հանձնաժողովում և Ընտրության ընթացակարգում ներգրավված պաշտոնյաների առջև,

(b) Ընտրության ընթացակարգի հետ կապված ցանկացած փաստաթուղթ ստորագրել և ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին, այլ իրավասու մարմիններին, Հանձնաժողովին և ընտրության ընթացակարգում ներգրավված պաշտոնյաներին,

(c) տրամադրել և ստանալ Ընտրության ընթացակարգի հետ կապված ցանկացած փաստաթուղթ,

(d) կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները Ընտրության ընթացակարգին Հայտատուի մասնակցությունն ապահովելու համար,

(e) պատվիրակել սույն լիազորագրով տրված լիազորությունները կամ դրանց մի մասը այլ անձանց։

Սույն լիազորագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է մինչև [ամիս, ամսաթիվ]։

[Լիազորողի անուն, ստորագրություն]

ՁԵՎ Գ. Հիմնական տեղեկատվության ձևաթուղթ

[ԹԵԿՆԱԾՈՒ / ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԱՆԴԱՄ]

1. Տեղեկություններ Թեկնածուի / Կոնսորցիումի անդամի մասին

Անվանումը

Տեսակը (ընկերություն, ընկերակցություն և այլն).

Գրանցման մանրամասները (գրանցման համարը, ամսաթիվը, վայրը և այլն).

Հիմնադրման երկիր.

Գտնվելու վայր.

Գլխավոր գրասենյակի հասցե.

Ղեկավար պաշտոնյաներ (անուն, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, պաշտոնը).

Հեռախոսահամար.

Ֆաքսի համար (առկայության դեպքում).

Էլեկտրոնային փոստի հասցե.

Գործունեության հիմնական ոլորտներ.

Կարգավորվող շուկան, որտեղ ընկերությունը գրանցված է (ցուցակված կազմակերպությունների համար)

Թեկնածուի (կոնսորցիումով դիմելու դեպքում՝ Կոնսորցիումի Առաջատար անդամի)՝ Որակավորման հայտը ներկայացնելուն նախորդող վերջին երեք տարիների ընթացքում գործադիր մարմինների անդամների, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի, մասնակիցների, իրական շահառուների և իր հետ փոխկապակցված անձանց ցանկը.[ներառել համապատասխան ցուցակը]

Թեկնածուի /Առաջատար անդամի բաժնեմասնակցության կառուցվածքը գծապատկերի (նկարի) տեսքով:

2. Կոնսորցիումի այլ անդամների մասին տեղեկություններ՝

Անվանումը

Տեսակը (ընկերություն, ընկերակցություն և այլն).

Գրանցման մանրամասները (գրանցման համարը, ամսաթիվը, վայրը և այլն).

Հիմնադրման երկիր.

Գտնվելու վայր.

Գլխավոր գրասենյակի հասցե.

Ղեկավար պաշտոնյաներ (անուն, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, պաշտոնը).

Հեռախոսահամար.

Ֆաքսի համար (առկայության դեպքում).

Էլեկտրոնային փոստի հասցե.
Գործունեության հիմնական ոլորտներ.
Կարգավորվող շուկան, որտեղ ընկերությունը գրանցված է (ցուցակված կազմակերպությունների համար)
Կոնսորցիումի անդամի՝ Որակավորման հայտը ներկայացնելուն նախորդող վերջին վերջին երեք տարիների ընթացքում գործադիր մարմինների անդամների, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի, մասնակիցների, իրական շահառուների և իր հետ փոխկապակցված անձանց ցանկը.[ներառել համապատասխան ցուցակը]
Կոնսորցիումի անդամի բաժնեմասնակցության կառուցվածքը գծապատկերի (նկարի) տեսքով.

3. Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի (այդ թվում՝ նաև Առաջատար անդամի)՝ սույն Որակավորման հարցման պահանջներին համապատասխանող մասնաբաժինը ապագա ընկերության կանոնադրական կապիտալում:

4. Լիազորված անձինք
Լրիվ անուն(ներ), անձը հաստատող փաստաթուղթ, լիազորագիր, հեռախոսահամար, լիազորված անձի էլ. փոստի հասցեն

/Ստորագրություն/

Ծանոթագրություն. Կոնսորցիումի դեպքում հնարավոր է ներկայացնել մեկ ՁՆ Գ Կոնսորցիումի բոլոր անդամների համար՝ նշելով Առաջատար անդամի և Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի մասին պահանջվող տեղեկատվությունը, կամ առանձին ՁՆ Գ-եր Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի համար: Երկու դեպքում էլ ՁՆ Գ-ն պետք է ստորագրվի Առաջատար անդամի կողմից, որը պետք է լիազորված լինի ներկայացնելու Որակավորման Հայտը և բոլոր փաստաթղթերը, որոնք Որակավորման Հայտի մաս են կազմում ամբողջ Կոնսորցիումի անունից: Կոնսորցիումի յուրաքանչյուր այլ անդամի վերաբերյալ ՁՆ Գ-ն, բացի Առաջատար անդամից, կարող է ստորագրել նաև տվյալ անդամը:

ՁԵՎ Դ. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ
[ԹԵԿՆԱԾՈՒ / ԱՌԱՋԱՏԱՐ ԱՆԴԱՄԻ / ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԱՆԴԱՄԻ]

_____2025թ.
(Ամիս / ամսաթիվ)

Առարկան	Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգ
Ում	Ընտրության ընթացակարգն իրականացնող հանձաժողովին

[Թեկնածուի/Առաջատար Անդամի/Կոնսորցիումի այլ Անդամի անվանումը] սույնով ներկայացնում և երաշխավորում է, որ սույն գրության ներկայացման ամսաթվի դրությամբ [Թեկնածու/Առաջատար Անդամի/ Կոնսորցիումի Անդամի անվանումը] (ըստ դեպքի).

1. համապատասխանում է Ընթացակարգի 6-րդ կետով սահմանված պահանջներին, այն է՝

- ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն դատական կարգով չեն ճանաչվել սնանկ, իր և իր գործադիր մարմնի անդամի, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ, փայատիրոջ կամ իրական շահառուի նկատմամբ չի հարուցվել սնանկության վարույթ, ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն չունեն Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չմարված (չներված) պարտավորություններ,

– ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն չեն համապատասխանում իրենց գրանցման վայրի՝ օրենսդրությամբ նախատեսված սնանկության (անվճարունակության) հատկանիշներին,

– ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն որակավորման հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չեն եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

- իր վերաբերյալ և իր գործադիր մարմնի անդամի, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ, փայատիրոջ կամ իրական շահառուի նկատմամբ որակավորման հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում առկա չէ Հայաստանի

Հանրապետությունում կամ այլ երկրում կայացված օրինական ուժի մեջ մտած դատական կամ վարչական ակտ՝ խաղային գործունեության կամ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար, կամ այդպիսի ակտով ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրը, փայատիրը կամ իրական շահառուի չի զրկվել ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

– ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն ներառված չեն Հայաստանի Հանրապետության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

- ինքը և իր գործադիր մարմնի անդամը, նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն՝

ա. չեն խախտել խաղային ոլորտի կարգավորման օպերատորի մրցույթի ընտրության պայմանագրով (կամ այլ երկրի օրենսդրությամբ դրան համարժեք պայմանագրով) նախատեսված կամ մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի (կամ այլ երկրի օրենսդրությամբ դրան համարժեք ընթացակարգի) շրջանակում ստանձնած էական պարտավորություն: Սույն պարբերության իմաստով էական պարտավորության խախտում է համարվում պարտավորության ցանկացած խախտում, որը հանգեցրել է պայմանագրով նախատեսված արդյունքներից էական շեղման,

բ. որպես հաղթող հայտատու չեն հրաժարվել խաղային ոլորտի կարգավորման օպերատորի մրցույթի ընտրության պայմանագիր (կամ այլ երկրի օրենսդրությամբ դրան համարժեք պայմանագիր) կնքելուց, իսկ պայմանագիր կնքելուց հրաժարված լինելու դեպքում վճարել են հայտի ապահովումը,

գ. հայտերը բացելուց հետո չեն հրաժարվել խաղային ոլորտի կարգավորման օպերատորի մրցույթի հետագա մասնակցությունից, իսկ հետագա մասնակցությունից հրաժարված լինելու դեպքում վճարել են հայտի ապահովումը,

- ինքը և իր գործադիր մարմնի անդամը, բաժնետերը, փայատերը կամ իրական շահառուն կամ փոխկապակցված անձը չեն հանդիսանում խաղային գործունեության կազմակերպիչ կամ խաղային արտադրանքներ արտադրող կամ խաղային գործունեության կազմակերպչի կամ խաղային արտադրանքներ արտադրողի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրա իրական շահառու կամ փոխկապակցված անձ կամ գործադիր մարմնի անդամ,

2. համապատասխանում է սույն Որակավորման հարցման Հավելված 4-ով սահմանված պահանջներին,

3. պատասխանատվություն է կրում Ընտրության ընթացակարգի ընթացքում սխալ կամ կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ և տվյալներ ներկայացնելու դեպքում,

4. հայտարարում է Օպերատորի ընտրության ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

5. պարտավոր է որակավորման փուլը հաղթահարելու դեպքում ապահովել առաջարկի հարցմամբ սահմանված պահանջներին համապատասխանող հայտ,

6. պարտավոր է Ընտրության ընթացակարգի արդյունքով հաղթող ճանաչվելու դեպքում մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, ստեղծել առևտրային կազմակերպություն և այն ներկայացնել պետական գրանցման, որը ՀՀ կառավարության որոշմամբ օպերատոր սահմանվելուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում պետք է համապատասխանի Կիրառելի օրենքով և պայմանագրով Օպերատորին ներկայացվող պահանջները,

7. երաշխավորում է, որ ըստ իրեն հասանելի տեղեկատվության, որը ձեռք բերելու ուղղությամբ վերջինս կատարել է բոլոր անհրաժեշտ հարցումները և ուսումնասիրությունները՝ որևէ Փոխկապակցված ընկերություն Ընտրության ընթացակարգի շրջանակներում չի ներկայացրել և մտադիր չէ ներկայացնել Որակավորման Հայտ (որպես առանձին Թեկնածու կամ Կոնսորցիումի Անդամ) կամ որևէ այլ կերպ Թեկնածուի մասնակցությանը զուգահեռ մասնակցել Ընտրության ընթացակարգին,

8. պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Հանձնաժողովին սույն հավաստման ամսաթվից հետո ի հայտ եկած՝ Փոխկապակցված ընկերության մասնակցության դեպքի վերաբերյալ.

9. ընդունում և գիտակցում է, որ սույն հավաստման ներկայացումը հանդիսանում է իր՝ Որակավորման Ընթացակարգին մասնակցության նախապայման, և որ դրանում կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկությունների տրամադրումը կարող է հանգեցնել իր որակազրկման:

[Լիազորված անձի ստորագրություն անունը, ազգանունը և պաշտոնը]

[Ստորագրող կազմակերպության անվանումը, հասցեն]

ՁԵՎ Ե. ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

_____2025թ.
(Ամիս / ամսաթիվ)

Առարկան	Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգ
Ում	Ընտրության ընթացակարգն իրականացնող հանձաժողովին

Սույնով [Հայտատուի (Կոնսորցիումով մասնակցության դեպքում՝ Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի) անվանումը] [հիմնադրի, բաժնետիրոջ, փայատիրոջ, մասնակցի, իրական շահառուի /ըստ վերաբերելիության/ անունը] տալիս եմ համաձայնությունը հետևյալի մասին.

1. ձեռք բերել իմ վերաբերյալ տեղեկություններ օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով.
2. ծանոթանալ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունների կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքներին։

Սույնով հավաստիացնում եմ, որ Հանձնաժողովի պահանջով անձամբ կներկայացնեմ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունների կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքները։

[Անձի կարգավիճակը, անունը և ստորագրությունը]
[Հասցեն]

ՁԵՎ Զ. Մասնագիտական փորձառության պահանջներին համապատասխանության աղյուսակ

Դասընթացի անվանում	Թեկնածուի/ Կոնսորցիումի անդամի/ դերն ու մասնաբաժինը	Հաստատ/ կայքը	Նախագծի տեսակն ու կարգավիճակը	Նախագծի արժեքը (ԱՄՆ դոլարով)	Հաստատող փաստաթղթերի ստորագրման / թողարկման ամսաթիվը	Նախագծի ավարտի ամսաթիվը	Տրամադրված ապացույցներ և վերլուծություն համար կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալներ

Ավելացնել տողեր, եթե անհրաժեշտ է

ՁԵՎ Է. Բանկի աջակցության նամակի բովանդակության պահանջներ

Եթե Թեկնածուն բանկի աջակցության նամակը ներկայացնում է որպես Հավելված 5-ի (Որակավորման չափանիշները) 1.4-րդ բաժնի (b) կետում նշված ֆինանսական չափանիշին համապատասխանությունը հաստատող ապացույց, ապա այդպիսի նամակը պետք է պարունակի.

1. Բանկի լրիվ անվանումը և գրանցման տվյալները,
2. Բանկի պատրաստակամության հաստատում Թեկնածուին կամ Կոնսորցիումի դեպքում Առաջատար Անդամին և Կոնսորցիումի բոլոր Անդամներին ընդհանուր առմամբ վարկ տրամադրելու 5-րդ հավելվածի (Որակավորման չափանիշներ) 1.4 բաժնի (b) կետում նշված չափով, ինչպես նաև նման պատրաստակամության վավերականության ժամկետը, որը չի կարող կարճ լինել Հայտարարության օրվանից հաշված 24 ամսից,
3. Բանկի կողմից հաստատում, որ Բանկը վստահելի բանկ է՝ համաձայն Հավելված 8-ի (Պահանջներ վստահելի բանկերին):
4. Պայմանագրով պահանջվող բոլոր անհրաժեշտ ակրեդիտիվները և բանկային երաշխիքները տրամադրելու բանկի պատրաստակամության հաստատում:
5. Նամակի տրամադրման ամսաթիվը, բանկի լիազորված անձի անունը և ստորագրությունը:

Բանկային աջակցության նամակի օրինակելի ձևը տրված է ստորև:

Այս օրինակելի ձևը պարտադիր չէ: Այնուհամենայնիվ, բանկի աջակցության նամակը, պետք է համապատասխանի վերը նշված ձև է-ում նշված բովանդակային պահանջներին:

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿ
[ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ]

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի Հանձնաժողովին
[Բանկի անվանումը]
[Գրանցման հասցե] [Կոնտակտային Հասցե]

Ամսաթիվ՝ _____ 2025 թ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգ, որի շրջանակում [Թեկնածուի անունը] («Թեկնածուն») դիմել է [Բանկի անվանումը] բանկային աջակցության նամակի տրամադրման նպատակով:

Սույն գրությամբ հավաստվում է, որ [Բանկի անվանումը] Որակավորման հարցման պայմաններին համապատասխան հանդիսանում է վստահելի բանկ և հայտնում է իր պատրաստակամությունը՝ վարկ տրամադրելու [Թեկնածուին կամ կոնսորցիումի բոլոր անդամներին (ըստ վերաբերելիության նշել)]-ին [ընդհանուր գումարը] ԱՄՆ դոլարի չափով (համարժեք ՀՀ դրամ՝ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեքին համապատասխան՝ [ՀՀ դրամով գումարի չափը]):

Բանկի պատրաստակամությունը ուժի մեջ է հետևյալ պայմանների պահպանման դեպքում՝ [պայմանների ցանկ]:

Բանկը հաստատում է իր պատրաստակամությունը տրամադրելու Պայմանագրով պահանջվող բոլոր անհրաժեշտ ակրեդիտիվները և բանկային երաշխիքները, եթե [Թեկնածուի անունը] ճանաչվի Ընթացակարգի հաղթող:

Բանկի առաջարկը ուժի մեջ է մինչև [ժամկետը (առնվազն 24 ամիս՝ Հայտարարության օրվից սկսած]:

[Բանկի ներկայացուցչի ստորագրություն]

ՁԵՎ Ը. Աուդիտորական ընկերությանը ներկայացվող պահանջների հաստատում

[ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱԳԻՐ]

___ _____ 2025

[Աուդիտորական կազմակերպության անվանումը] իրավաբանական անձը, որը հիմնադրված է [Երկրի անվանումը] օրենքով, գրանցված է [Հասցեն] հասցեում, [ըստ անհրաժեշտության՝ գրանցման այլ մանրամասներ], սույնով հաստատում է իր համապատասխանությունը հետևյալ պահանջներին՝

(a) [Աուդիտորական ընկերության անվանումը] լիցենզավորված է աուդիտորական գործունեություն իրականացնելու համար՝ իր հիմնադրման երկրի օրենսդրությանը համապատասխան, և ներառված է [նշել համապատասխան ռեգիստրի անվանումը՝ համաձայն աուդիտորական ընկերության հիմնադրման երկրի օրենսդրությանը]: [Աուդիտորական ընկերության անվանումը] աուդիտորական գործողություններ է իրականացնում [լիցենզիայի/այլ փաստաթղթի (նշել ամբողջական մանրամասները)] հիման վրա,

(b) [Աուդիտորական ընկերության անվանումը]-ում գրանցված են լրիվ դրույքով աշխատող առնվազն 10 աշխատակիցներ, որոնք աշխատանքային պայմանագրերի հիման վրա անմիջականորեն ներգրավված են աուդիտորական ծառայությունների մատուցման գործընթացում,

(c) [Աուդիտորական ընկերության անվանումը]-ի առնվազն 3 աշխատակիցներ ունեն վկայականներ / որակավորման այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ վերջիններս ունեն բավարար որակավորում՝ աուդիտորական գործունեություն իրականացնելու համար [նշել աուդիտորական ընկերության հիմնադրման երկիրը] տարածքում:

(d) Վերջին երեք տարիների ընթացքում [Աուդիտորական ընկերության անվանումը]-ի տարեկան հասույթը առնվազն 30,000,000 ՀՀ դրամ է (կամ այդ գումարին համարժեք արտարժույթ՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքին համապատասխան),

(e) [Աուդիտորական ընկերության անվանումը] ունի պատասխանատվության ապահովագրության պայմանագիր (պայմանավորված մասնագիտական գործունեության հետ կապված հնարավոր կորուստների փոխհատուցմամբ 50,000,000 ՀՀ դրամից ոչ պակաս գումարով (կամ այդ գումարին համարժեք արժույթով՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքին համապատասխան)): Ապահովագրության պայմանագիրը վավերական է աուդիտորական ծառայությունների մատուցման ողջ ժամանակահատվածում:

Ծրագրի շրջանակներում [Աուդիտորական ընկերության անվանումը] պատրաստ է ապացույցներ ներկայացնել վերը նշված պահանջներին իր համապատասխանության վերաբերյալ, Հանձնաժողովի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում:

Հարգանքով՝ [Ստորագրություն]
[Լիազորված անձի անուն, ազգանուն և պաշտոն]

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ **տեղեկատվության գաղտնիության և չհրապարակման մասին**
___ _____ 2025 Երևան Հ._____
Գաղտնիության և տեղեկատվության չհրապարակման մասին սույն նախաձեռնությունը և դրա հավելվածները (այսուհետ՝ «Գաղտնիության Նախաձեռնությունը») տրվում են [Հայտատուի Անուն] կողմից:
1. ԽՆԴՐՈ ԱՌԱՐԿԱՆ
1.1. «Գաղտնի Տեղեկատվությունը» ներառում է ցանկացած ձևով տրված կամ ներկայացված ցանկացած տեղեկատվություն (բացառությամբ՝ հանրային հասանելի տեղեկատվության), որը տեղեկատվություն տրամադրողը որակել է որպես գաղտնի:
1.2. Հայտատուն կարող է հասանելիություն ստանալ Գաղտնի Տեղեկատվությանը, եթե սույն Որակավորման հարցմանը համապատասխան՝ Հանձնաժողովը ծանուցել է Հայտատուին Գաղտնի տվյալներին հասանելիությունը հավաստելու մասին:
2.ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ
2.1. Հայտատուն պետք է՝ (a) չբացահայտի գաղտնի տեղեկատվությունը որևէ երրորդ անձի, բացի սույն Գաղտնիության Նախաձեռնությամբ նախատեսված դեպքերից. (b) ձեռնարկի բոլոր համարժեք միջոցները Գաղտնի Տեղեկատվության պաշտպանության համար, ներառյալ՝ երրորդ անձանց չարտոնված հասանելիությունից:
2.2. Հայտատուն կարող է Գաղտնիության Նախաձեռնության համաձայն բացահայտել Գաղտնի Տեղեկատվությունը հետևյալ օգտատերերին (Արտոնված Օգտատերեր)՝ (a) Լիազորված անձինք, (b) Հայտատուի աշխատակիցները և մասնագիտական խորհրդատուները (Լիազորված անձանցից տարբերվող). (c) Հայտատուի հետ փոխկապակցված ընկերությունները, նրանց լիազորված անձինք, (d) Կոնսորցիումի դեպքում՝ Կոնսորցիումի այլ անդամները:
2.3.Հայտատուն կարող է Արտոնված Օգտատերերի համար բացահայտել Գաղտնի

Տեղեկատվությունը հետևյալ պարտադիր նախապայմաններով.

(a) Գաղտնի Տեղեկատվության բացահայտումն իրականացվում է բացառապես այնքանով, որքանով դա պահանջվում է Ընտրության Ընթացակարգին Հայտատուի մասնակցության համար, և

(b) Արտոնված Օգտատերերը հետևում են սույնով սահմանված գաղտնիության և Գաղտնի Տեղեկատվության չբացահայտման պահանջներին, և Հայտատուն երաշխավորում է և կրում է պատասխանատվություն առ այն, որ Թույլատրված Օգտատերերը բավարարում են բոլոր պահանջներն ու պարտավորությունները:

2.4.Եթե օրենքի շրջանակներում Հայտատուից կամ Արտոնված Օգտատերերից պահանջվում է պարտադիր բացահայտել Գաղտնի Տեղեկատվությունը երրորդ անձանց (մասնավորապես՝ իրավասու պետական մարմիններին), Հայտատուն պետք է անմիջապես ծանուցի Հանձնաժողովին նման բացահայտման պահանջի վերաբերյալ:

Երբ Գաղտնի Տեղեկատվությունը տրամադրվում է երրորդ կողմերին (մասնավորապես՝ իրավասու պետական մարմիններին)՝ օրենքով նախատեսված պահանջի համաձայն, Հայտատուն պարտավոր է գրավոր ծանուցել այդ երրորդ կողմերին այն մասին, որ տրամադրված տեղեկատվությունը գաղտնի է և չի կարող բացահայտվել որևէ այլ երրորդ կողմի:

2.5.Գաղտնի Տեղեկատվության ցանկացած բացահայտում, բացառությամբ՝ վերը նշված 2.2-2.4 կետերով նախատեսված դեպքերի, պետք է նախապես հաստատվի Հանձնաժողովի կողմից:

3. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ

3.1. Հայտատուն լիարժեք պատասխանատու է Հայտատուի և Արտոնված Օգտատերերի կողմից սույն Գաղտնիության Նախաձեռնության ցանկացած խախտման համար:

3.2. Հայտատուն պետք է ամբողջ ծավալով փոխհատուցի Հանձնաժողովի կամ այլ իրավաու մարմնի համար առաջացած ուղղակի ծախսերը, որոնք առաջացել են Գաղտնի Տեղեկատվության չբացահայտման հետ կապված պարտավորությունների խախտման հետևանքով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն Գաղտնիության Նախաձեռնությունը վավեր է ստորագրումից հետո երկու (2) տարվա ընթացքում:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտատու

[Անվանում]

Իրավաբանական հասցե՝ _____

[Հայտատուի բանկային տվյալները]

_____

[ստորագրություն]
[Լիազորված անձի պաշտոնը և անունը]

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀՈՒՍԱԼԻ ԲԱՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. **Հուսալի բանկ է՝**

(a) ցանկացած ռեզիդենտ բանկ.

(b) ցանկացած ոչ ռեզիդենտ բանկ, որն ունի A-(ըստ «Standard» և «Poor» կամ «Fitch» վարկանիշների) կամ A3 (ըստ «Moody»-ի վարկանիշի) վարկանիշից ոչ ցածր վարկանիշ:

2. **Հուսալի բանկ չէ.**

(a) ցանկացած բանկ (կամ բանկի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ցանկացած անձ), որը չի համապատասխանում սույն Որակավորման հարցման ՁԵՎ Դ-ի 1-ին կետի պահանջներին,

(b) ցանկացած բանկ (կամ բանկի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ցանկացած անձ), որի նկատմամբ Կիրառելի օրենքի կամ միջազգային օրենսդրության համաձայն կիրառվում են պատժամիջոցներ,

(c) ցանկացած ռեզիդենտ բանկ, որը նախորդ 12 ամիսների ընթացքում խախտել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի համարժեքության նորմատիվի պահանջները:

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Որակավորման հարցմամբ մեծատառով օգտագործված հետևյալ տերմինները, արտահայտությունները և հապավումները պետք է ունենան սույն կետով տրված նշանակությունը:

Խորհրդատուներ	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք ունեն փորձ համապատասխան ոլորտում և կարող են եզրակացություններ, պարզաբանումներ, առաջարկություններ և խորհուրդներ տալ հատուկ գիտելիքներ և փորձ պահանջող հարցերի վերաբերյալ (օրինակ՝ իրավական, տեխնիկական, առևտրային, ֆինանսական հարցեր և այլն)
Աուդիտորական Ընկերություն	Իրավաբանական անձ, որն իրավունք ունի իրականացնելու աուդիտորական գործունեություն իր հիմնադրման երկրի օրենսդրությամբ և համապատասխանում է սույն Որակավորման հարցմամբ սահմանված պահանջներին
Պայմանագիր	Վերահսկող մարմնի և Ընտրության ընթացակարգի հաղթողի կողմից ստեղծված նոր առևտրային կազմակերպության՝ որպես Կառավարության որոշմամբ Օպերատոր սահմանված իրավաբանական անձի միջև կնքվող պայմանագիր
Որակավորման հարցման հայտարարություն	Որակավորման հարցման վերաբերյալ հայտարարություն, որը հրապարակվում է Պաշտոնական կայքերում հայտարարության հրապարակման օրը
Հայտատու	Ընտրության ընթացակարգին մասնակցելու համար Որակավորման հայտ ներկայացնող իրավաբանական անձ կամ Կոնսորցիում, որը դիմել է Օպերատորի ընտրության մրցույթին մասնակցելու համար
Կիրառելի օրենք	Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, որոշումները կամ կանոնակարգերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը
Լիազորված պաշտոնյաներ	Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը

Կոնսորցիում	Իրավաբանական անձինք (Առաջատար անդամ կամ Կոնսորցիումի այլ անդամներ), ռեզիդենտ և/կամ ոչ ռեզիդենտ, որոնք համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա մասնակցում են Ընտրության ընթացակարգին որպես Հայտատու և, ի թիվս այլնի, պայմանավորվել են միասին հիմնել ընկերություն, որի հետ կնքվելու է Պայմանագիրը, եթե Կոնսորցիումը ճանաչվի հաղթող:
Լիազորված անձինք	Ֆիզիկական անձինք, որոնք լիազորված են Ընտրության ընթացակարգի շրջանակում ներկայացնելու Հայտատուին համապատասխան լիազորող փաստաթղթերի հիման վրա
Լիազորող փաստաթղթեր	Փաստաթուղթ կամ փաստաթղթեր, որոնք հաստատում են Լիազորված անձի լիազորությունը՝ ներկայացնելու Հայտատուին Ընտրության ընթացակարգում: Լիազորող փաստաթղթերը կարող են ունենալ լիազորագրի ձև, որի բովանդակության պահանջները սահմանված են Հավելված 6-ի (*Որակավորման հայտի բովանդակություն*) Ձև Բ-ում (*Լիազորագրի բովանդակության պահանջներ*) կամ այլ փաստաթղթեր, որոնք հստակորեն հաստատում են Լիազորված անձի լիազորությունը՝ ներկայացնելու Հայտատուին և սահմանում են առնվազն նույն լիազորությունների շրջանակը, ինչ նշված է Հավելված 6-ի Ձև Բ-ում
Իրական Շահառու	Օրենքով սահմանված իրական շահառու
Վերահսկող մարմին	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
Գաղտնիության Նախաձեռնություն	Հավելված 7-ում սահմանված ձևով փաստաթուղթ (Գաղտնիության Նախաձեռնության Ձև), որը պետք է ստորագրվի Հայտատուի կողմից և ներկայացվի Հանձնաժողովին:
Կոնսորցիումի անդամ	Կոնսորցիումի մաս կազմող իրավաբանական անձ՝ թե Առաջատար անդամ, թե Կոնսորցիումի այլ անդամներ
Վերահսկողություն	Որոշիչ ազդեցությունը տնտեսվարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեության վրա, որն իրականացվում է մեկ կամ մի քանի իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց կողմից ուղղակիորեն կամ

	այլ անձանց միջոցով, մասնավորապես՝ որոշիչ ազդեցությունն իրականացվում է՝ - բոլոր ակտիվները կամ դրանց զգալի մասը տիրապետելու կամ օգտագործելու իրավունք ունենալու ուժով. - տնտեսվարող սուբյեկտի կառավարման մարմինների կազմի, քվեարկության արդյունքների և որոշումների ընդունման վրա վճռորոշ ազդեցություն ապահովող այնպիսի համաձայնագրերի և պայմանագրերի առկայությամբ, որոնք հնարավորություն են տալիս սահմանելու ձեռնարկատիրական գործունեության պայմանները, տալու պարտադիր ցուցումներ. - տնտեսվարող սուբյեկտի ղեկավար մարմնի գործառույթներ կատարելով՝ զբաղեցնելով տնտեսվարող սուբյեկտի վերահսկիչ խորհրդի, տնօրենների խորհրդի կամ վերահսկիչ կամ գործադիր այլ մարմնի ղեկավարի կամ նախագահի տեղակալի պաշտոնը՝ այն անձի կողմից, որը զբաղեցնում է վերը նշված պաշտոններից մեկը կամ մի քանիսը այլ տնտեսվարող սուբյեկտներում. - Վերահսկող են համարվում նաև Օրենքի տեսանկյունից փոխկապակցված համարվող ֆիզիկական և իրավաբանական անձինք:
Հանձնաժողով	Օպերատորի ընտրության մրցույթի անցկացման աշխատանքները կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական մրցութային հանձնաժողով
Առաջատար Անդամ	Կոնսորցիումի անդամ, որը ներկայացնում է ամբողջ Կոնսորցիումին և համապատասխանում է սույն Որակավորման հարցմամբ սահմանված պահանջներին
Պաշտոնյա	Իրավաբանական անձի միանձնյա գործադիր մարմինը, կոլեկտիվ գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, դիտորդ խորհրդի, ներքին աուդիտի մարմնի միանձնյա գործադիր մարմինը, ներքին աուդիտորը կամ իրավաբանական անձի գլխավոր հաշվապահը
Պաշտոնական Լեզուներ	Հայերեն, անգլերեն, ռուսերեն

Որակավորման Հարցում (ՈՀ)	Փաստաթուղթ, որը սահմանում է Ընտրության ընթացակարգին մասնակցելու համար Հայտատուների կողմից Որակավորման հայտերը կազմելու պահանջները, Որակավորման հայտերի բովանդակությունը, ներկայացման կարգը, Որակավորման հայտերի գրանցումը, բացումը և վերանայումը, ինչպես նաև Ընտրության ընթացակարգի Հայտատուներին ներկայացվող պահանջները
Որակավորման հայտ	Փաստաթղթերի փաթեթ, որը պատրաստվել և ներկայացվել է Հայտատուի կողմից՝ Ընտրության ընթացակարգին մասնակցելուն որակավորվելու համար՝ համաձայն Հավելված 6-ում (*Որակավորման հայտի բովանդակություն*) սահմանված ձևաչափի և բովանդակության
Որակավորման հայտերի գնահատման վերջնաժամկետ	Սույն Որակավորման հարցմամբ սահմանված՝ որակավորման հայտերի գնահատման վերջնաժամկետ
Որակավորման չափանիշներ	Հավելված 5-ում (*Որակավորման չափանիշներ*) սահմանված տեխնիկական և ֆինանսական չափանիշները
Որակավորված Հայտատու	Որակավորման Հարցման փուլում Ընտրության Ընթացակարգին մասնակցելու համար սույն Որակավորման Հարցման պայմանների համաձայն որակավորված և Հանձնաժողովին Գաղտնիության Նախաձեռնությունը ներկայացրած հայտատու
Վստահելի բանկ	Բանկ, որը համապատասխանում է Հավելված 8-ի պահանջներին (*Վստահելի բանկերին ներկայացվող պահանջներ*)
Առաջարկի Հարցում (ԱՀ)	Փաստաթուղթ, որը ներկայացնում է պահանջներ Հայտատուների համար Պայմանագրի կնքման նպատակով, ինչպես նաև՝ այլ պայմաններ, որոնք պետք է և/կամ կարող են արտացոլվել ԱՀ-ում Կիրառելի Օրենքի շրջանակներում, և նախատեսված է Որակավորված Հայտատուների համար:
Ընտրության ընթացակարգ	Հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացվող ընտրության գործընթաց, որով համապատասխան Թեկնածուն ճանաչվում է հաղթող:

Այն Տերմիններն ու արտահայտությունները, որոնք սահմանված չեն սույն Որակավորման Հարցման այլ բաժիններում, ունեն Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ, այդ թվում՝ «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով և Ընթացակարգով սահմանված՝ իրենց վերագրվող նշանակությունը։